ԼԵՎՈՆ ԱԴՅԱՆ

ԹՈՒԽ ՃԱՅԸ

ԼԵՎՈՆ ԱԴՅԱՆ

ԹՈՒԽ ՃԱՅԸ. Պատմվածք. Էսսե. Մանրաքանդակներ

«Издательские решения»

ԱԴՅԱՆ Լ.

ԹՈՒԽ ՃԱՅԸ. Պատմվածք. Էսսե. Մանրաքանդակներ /
Լ. ԱԴՅԱՆ — «Издательские решения»,

ISBN 978-5-44-906102-7

Լևոն Ադյանը ներկա գրքում մի տեսակ առանձնահատուկ, ղյուրզգաց քնքշանքով է նկարագրում հարազատ օրրան Արցախն իր՝ հեքիաթային բնությամբ, շրջապատված լեռներով, սառն աղբյուրներով, բուռն գետերով, ստվարախիտ զով անտառներով, ծաղկավառ հանդ ու սարերով, ու այս գեղահրաշ համապատկերին՝ հերոսների անսովոր ճակատագրեր, ուր նուրբ ու հմտորեն տրված են գլխավոր անձանց կերպարներում՝ սիրով, ջերմությամբ ու բարությամբ զարդարելով նրանց դժվարին առօրյան՝ դիմակայելու կյանքի բազում փորձություններին ու չընկճվել:

ISBN 978-5-44-906102-7

© ԱԴՅԱՆ Լ.
© Издательские решения

Содержание

ԷՍՍԵ 12
Конец ознакомительного фрагмента. 44

ԹՈՒԽ ՃԱՅԸ
Պատմվածք. Էսսե. Մանրաքանդակներ

ԼԵՎՈՆ ԱԴՅԱՆ

© ԼԵՎՈՆ ԱԴՅԱՆ, 2020

ISBN 978-5-4490-6102-7
Создано в интеллектуальной издательской системе Ridero

Պ Ա Տ Մ Վ Ա Ծ Ք

Թ Ու Խ Ճ Ա Յ Ը

Միայնակ մի ճայ՝ ճիչը հուսահատ,
Միայնակ մի ճայ՝ բախտը վշտալի,
Միայնակ մի ճայ, թեպետ և ազատ՝
Այս մեծ աշխարհում, ախ, հանգիստ չունի…
Ալյոնա Ռոստովա

Ճայեր չկային արդեն: Արևն իջնում էր կապտաժեռ հորիզոնն ի վար: Մեղմ քամին օրորում էր ծովը, և ճերմակաթև ալիքները, ինչպես թևատարած ճայեր, թևում էին դեպի ափ: Տղան անտրամադիր էր: Նա եկել էր վերջին հանդիպման: Քանիցս վճռել էին բաժանվել, բայց ամեն անգամ կրկին հանդիպում էին: Այդպես շարունակել անհնար էր այլևս, անհրաժեշ էր բաժանվել: Հանդիպումը հեշտ էր, բաժանումը՝ անասելի դժվար:

Ծովը խաղաղ էր: Ալիքները մանր խշշոցով լիզում էին ափի ավազը ու ետ էին սահում:

Տղային դուր էին գալիս ճայերը, երբ նրանք թևածում էին ջրերի վրա, ուղղահայաց իջնում ալիքներին ու կրկին թևում վեր: Ինչ-որ տեղ կարդացել էր, որ ճայերից մեկի կորստի դեպքում՝ մյուսը վերից ուղղահայաց սուրում, իրեն խփում է ժայռերին, զոհվում: Նա հիմա նայում էր այդ ալիքներին ու մտածում էր ճայերի մասին: Ձյունասպիտակ ճայերի, որ հիմա երևի ինչ-որ արևոտ տեղ էին, հեռվում, երկինքն ու ծովն իրար ձուլող հորիզոնից այն կողմ, և ձայն – ձայնի՝ ազատ ու հանդարտ պտտվում էին կապտաթույր ջրերի վրա:

Տղան չլսեց խճաքարերի ձայնը: Նա նայում էր հեռվում, ծովի հեռու խորքում կանգնած միայնակ նավին, որ շողշողում էր իրիկնային արևի ներքո: Կինը ետևի կողմից մոտեցավ, կանգնեց քիչ հեռվում: Տղային էր նայում: Ի՞նչ է մտածում այդպես, ո՞ւմ մասին է մտածում, ոչ առանց խանդի, անցավ կնոջ մտքով: Հեռանալ, հեռանալ, մոռանալ նրան, մտածում էր նա սրտի նվաղումով ու վշտամորմոք, բայց ի՛նչ հեշտ է ասել՝ մոռացիր, մոռացիր ամեն ինչ՝ աչքերի փայլը, հայացքը նրա, ձայնն ու ժպիտը, շունչը նրա ջերմ, քնքշանքը նրա, ուժեղ շուրթերի հպումը այրող, մատների դողը իմ մերակներին, նրա մոլուցքը՝ քնքուշ, անհագուրդ ու սիրահարույց…

– Ահա և ես, – ասաց նա իր քաղցրահունչ ձայնով:

Տղան իսկույն շրջվեց, թեպետ նրան սպասում էր սրտի անդիմադրելի հուզումով, բայց շփոթվեց, երբ տեսավ նրան՝ միշտ նույն ամոթխած դուրեկան ժպիտով ու սևասև հրացայտ աչքերով: Նա լայն ժպտաց՝ կնոջ դյուրաբեկ փխրուն մարմինն առնելով գրկի մեջ:

– Սիրելիս, սիրելիս, սիրելիս, – անդադար շշնջում էր տղան, շուրթերը քսելով նրա սևաթույր մազերին:– Վախենում էի, թե չես գա…

– ինչո՞ւ:– Կինն իր կրակացայտ աչքերով նայեց տղային, միաժամանակ մտածելով այն մասին, որ ինքն անկարող է նրան հանել իր սրտից:– Թե՞ ուզում էիր, որ չգայի, – ավելացրեց նա ժպտալով:

– Ոչ: Վախենում էի, թե չես գա, – ասաց տղան: – Որ քեզ չի հաջողվի գալ: Իսկ ես այնպես էի սպասում:– Նա կնոջ մատները մոտեցրեց շուրթերին. քսում էր շուրթերին, մեկ առ մեկ համբուրելով այդ սառնավուն մատները:– Ինչպե՞ս եկար:

– Չգիտեմ:– Կինը թեթև օրորեց գլուխը, սեղմվեց տղային:– Ասացի ընկերուհուս մոտ եմ գնում:

– Չվախեցա՞ր:

– Եթե կարողանամ այդքան մտածել, -գլուխը տղայի կրծքին սեղմած, դառը ժպտաց կինը:– Չեմ կարողանում մտածել: Չգիտեմ, թե ինչ է կատարվում ինձ հետ: Չեմ կարողանում հասկանալ: Բայց վերջ: Էլ չենք հանդիպի: – Տղան իր կրծքին զգում էր նրա տաք շունչը:– Էլ չեմ կարող, էլ ուժ չունեմ, հարազատս, սա վերջին անգամն է, լսո՞ւմ ես…

– Լսում եմ, – ծանր, բայց ժպտադեմ, ասաց տղան:

Կինը գլուխը բարձրացրեց տղայի կրծքից:

– Ինչո՞ւ այսպես ստացվեց, – ասես ինքն իրեն, երազկոտ ասաց նա:– Ես ինձ համար հանգիստ ապրում էի, ինչո՞ւ ամեն ինչ փոխվեց…

Տղան կատակի տվեց.

– Եթե ես եմ մեղավոր՝ ներող եղիր:

Կինը ժպտաց, գլուխը վերստին սեղմեց տղայի կրծքին: «„Վերջ, – մտքում ասաց նա:– Սա վերջին անգամն է, էլ չենք հանդիպի“»:

Հետո մտախոհ քայլում էին ծովափով, և ծովը միալար աղմկում էր: Հանդիպեցին հաղորդավար ընկերոջ տանը: Ընկերոջ ծննդյան օրն էր: Կինն ամուսնու հետ էր: Ու տղան երբեմն անկարող էր լինում չնայել նրան: Ինչ —որ անհայտ ու գայթակղիչ բան կար կնոջ մեջ, որ շարունակ իրեն էր ձգում տղայի հայացքը: Հաճելի, սրտառուչ երեկո էր: Խմում էին, զրուցում, երաժշտություն էին լսում: Դեմ-դիմաց էին նստած: Տղային նույնիսկ մի պահ թվաց՝ դեռատի կինն այդ ժպտաց իրեն, որից ասես արյունը եռ եկավ ներսում: Հետագայում նա հաճախակի էր մտածում անծանոթ կնոջ մասին: Ժպիտն էր հիշում հատկապես: Ամոթխած այդ ժպիտի մեջ աննկարագրելի հմայք կար, որը գերում էր տղային: Հետո հանդիպեցին փողոցում, պատահաբար:

– Բարև ձեզ, – առաջինը տղան նկատեց, մոտեցավ, – ինչպե՞ս եք:

– Ոչինչ:– Կինը միանգամայն կորցրել էր իրեն, շիկնահար ու նույն ամոթխած ժպիտով՝ նա սքանչելի էր:– Դո՞ւք ինչպես եք:

– Այսպես, – ուսերը թոթվեց տղան, ժպտաց:– Ինչպես տեսնում եք:– Ձեր ամուսինն ինչպե՞ս է:

– Ոչինչ:– Կինն իրեն վատ զգաց, որ մի հարմար բառ չգտավ այդ անհեթեթ «„ոչնչից“» բացի: Նա, ասես հիպնոսացած, ուղիղ նայում էր տղային, ուզում էր չնայել ու չէր կարողանում: Տղան զգում էր դա, նեքուստ հրճվում:

Նրանք մնացել էին կանգնած փողոցի մեջտեղը: Ասելիք շատ կար, թվում էր, բայց կանգնել էին առանց խոսքի ու կարծես ոչինչ չէին գտնում ասելու, բայցև չէին բաժանվում:

– Լավ երեկո էր, չէ՞, – ի վերջո ասաց տղան, – ձեզ դո՞ւր եկավ:

– Այո, -ասաց կինը, – հաճելի էր ամեն ինչ: Ուրիշ տեղերում սովորաբար խոսում են առօրյա բաներից, շատ դեպքերում կենցաղային անհետաքրքիր, ձանձրալի մանրուքներից, բայց այստեղ ամեն ինչ, իրոք, այլ կերպ էր, միանգամայն այլ այլ մթնոլորտ էր: Իսկապես որ, լավ երեկո էր: Դուք ինչո՞ւ բանաստեղծություններ չկարդացիք, – ավելացրեց նա շիկնանքով:

– Ի՞նչ բանաստեղծություններ, – ժպտաց տղան

– Ձերը: Դուք գրում եք, ես գիտեմ: Ես ձեզ մինչ այդ էլ գիտեի, շատ եմ կարդացել ու հաճելիորեն զարմացած էի, առաջին անգամ այդպես պատահականորեն տեսնելով ձեզ:

– Շնորհակալ եմ, – լայն ժպտաց տղան:– Ուրեմն դուք ինձ գիտեիք մինչ այդ: Իսկ հետո, այդ օրվանից հետո, հիշե՞լ եք ինձ: Գոնե մի անգամ:

– Հիշել եմ, – ցածրաձայն արձագանքեց կինը և շիկնանքն ավելի ծաղկեց նրա դեմքին:

Այդ պահին նա, իրավ, սքանչելի էր:

– Եվ ոչ մի անգամ… – ավելացրեց նա, ակնդետ նայելով տղայի աչքերի մեջ:– Շատ անգամ եմ հիշել:

– Ես նույնպես հիշել եմ ձեզ: Ընդ որում, հիշել եմ երանությամբ ու երազել երբևէ հանդիպել ձեզ ու ասել այն մասին, որ բազում բանաստեղծություններ եմ գրել՝ նվիրված ձեզ: Եվ, քանի որ ձեր անունն անգամ չգիտեի, բանաստեղծական շարքի վրա գրված է՝ «„Ձոներգ անծանոթ գեղեցկուհուն“» :

– Աստված իմ, դուք ինձ բանաստեղծությունն՞ր եք նվիրել:

– Իհարկե: Ու հույսս չէի կտրում, որ անպայման կհանդիպեմ ձեզ ու կասեմ ձեզ այդ մասին: Գիտե՞ք ինչ բան է հույսը: Ծեր մարդիկ ամեն գիշեր պառկում են քնելու՝ առանց որևէ երաշխիքի, որ հաջորդ օրն առավոտյան արթնանալու են, բայց ամեն դեպքում նորից ու նորից զարթուցիչը լարում ենք: Այ, դա է հույսը, ու ես երախտապարտ եմ Աստծուն, որ հանդիպեցի ձեզ:

– Շնորհակալ եմ, – անակնկալ բերկրանքից հուզված, ժպտաց կինը:– Ուրեմն մենք երկուստեք հիշել ենք իրար:

Այն երեկոյից հետո կինն, իրավամբ, տղային չէր մոռացել: Շարունակ մտածում էր նրա մասին, և հիմա, պարզվում է՝ տղան նույնպես հիշել է իրեն, բանաստեղծություններ է ձոնել… Կնոջ մտքով չանցավ անգամ, թե տղան գուցե հենց այնպես, մի բան ասած լինելու համար ասաց այդ ամենը, որ դա պարզապես բանաստեղծական վառ երևակության արդյունք է սոսկ: Ըստ երևույթին, մարդ հակված է կուրորեն հավատալու այն բանին, ինչին որ սրտանց ուզում է հավատալ:

– Զգացված եմ, – կրկին արտաբերեց նա նույն ցածր ձայնով:– Դուք անչափ բարի եք…

Փողոցի մեջտեղն էին, անհարմար էր, կինը դժկամությամբ մի քայլ ետ գնաց:

– Ցտեսություն, – ասաց նա:

– Ցտեսություն, – արտասանեց տղան, մի քայլ ընդառաջ եկավ:– Ես մի բան էի ուզում ասել ձեզ:

– Ի՞նչ, – հետաքրքրվեց կինը:– Ասացեք:

Տղան այդ մասին չէր մտածել, բայց գտավ ելքը.

– Ես այդ բանաստեղծություններն ուզում եմ կարդալ ձեզ: Չէ – որ անքուն գիշերներ եմ անց կացրել ու երազել՝ կարդալ ձեզ ու լսել ձեր կարծիքն այդ մասին : Մի մերժեք, խնդրում եմ, ցավ մի պատճառեք ինձ: Կհանդիպենք հենց այնտեղ, ուր առաջին անգամ հանդիպել էինք: Հասցեն, փառք Աստծո, գիտեք: Նա իմ մոտ ընկերն է, կստեղծենք այն նույն մթնոլորտը, որ կար այն ժամանակ, երաժշտություն կլսենք նաև, ու ես սիրով կկարդամ իմ ստեղծագործությունների շարքը՝ նվիրված ձեզ: Այսինքն դեռատի մի չնաշխարհիկ գեղեցկուհու՝ որն իր հրայրքով ու հմայքով գերել է հայ բանաստեղծին:

Կինն ուզում էր ասել, որ սիրում է ամուսնուն, որ երեխաներ ունի՝ մի տղա ու մի աղջիկ, և որ ինքը ոչ մի տեղ չի գնա օտար տղամարդու հետ, բայց շուրթերն ակամա շշնջացին.

– Չգիտեմ…

– Ես վաղն այս ժամին կսպասեմ ձեզ այնտեղ: Խնդրում, աղաչում եմ, մի փշրեք այն սիրտը, որ ձեզ համար է բաբախում նաև:– Տղան շուտափույթ բաժանվեց, որպեսզի կինը չհասցներ մերժել նրան:

Նրանց հաջորդ հանդիպումը ընկերոջ բնակարանում չէր: Այն ժամանակ նա գործուղման մեջ էր, սակայն կինն այդ մասին չգիտեր: Այս հանդիպումը ուշ երեկոյան էր, հարյուր ինն համարի ավտոբուսի վերջին կանգառում, քաղաքային լողափ իջնող շրջադարձում: Կինն իջավ երթուղային ավտոբուսից, վարանքով նայեց շուրջը: Հարևան տներում լույսեր էին վառվում: Տղան դուրս եկավ ծառերի ետևից և գնաց դեպի կանգառ: Նա

հաղթանդամ էր, լայնաթիկունք ու գեղեցիկ, և կնոջն այնպես թվաց, թե ինքն ամբողջ կյանքում հատկապես նրան է սպասել և ակամայից առաջ գնաց, առանց հայացքը տղայից կտրելու, նրանց ձեռքերը, ասես տարիներ շարունակ իրար որոնել ու չէին գտել, կարոտով խառնվեցին:

– Շնորհակալ եմ, որ եկար, – ասաց տղան, հետո ավելացրեց, – կխենթանայի, եթե չգայիր:

Մացառների ու քարերի արանքով իջնող արահետով նրանք իջան դեպի ծով: Լռություն էր, և միայն ճերմակափրփուր ալիքներն էին, որ թեթև աղմուկով գալիս, խփվում էին առափնյա սալ քարերին ու փշուր-փշուր ետ էին սահում:

Նստեցին ամայի ծովափին: Կինը, ինչպես նախորդ հանդիպմանը տղայի ընկերոջ բնակարանում, մտովի նախատում էր ինքն իրեն, որ այստեղ եկավ, որ այսպես անկամ ու թույլ գտնվեց, եկավ: Նա հայացքը հառել էր հեռու և մտամփոփ նայում էր մի կետի: Այնտեղ, ուր ծովն ու երկինքը միանում էին իրար: Նրան այնպես էր թվում, թե տղան մտքում ծիծաղում է իր վրա: Նա նույնիսկ սարսափեց այդ մտքից, նայեց տղային, ասաց.

– Ես ինքս ինձ ներել չեմ կարող, բայց դու, խնդրում եմ, ներիր ինձ, որ այսքան կամազուրկն եմ…

Տղան չթողեց, որ նա խոսի: Նա քնքշորեն բռնեց կնոջ ուսերը, կնոջ դեմքը շրջեց իր կողմը:

– Ես սիրում եմ քեզ, – շշնջաց տղան, համբուրելով կնոջ կիսաբաց մեղուշ շուրթերը: Տղայի շուրթերը պինդ էին, ձեռքերն ուժեղ էին, և գիրկը տաք էր, և կնոջ համար աստղերը երկնքում շաղ էին գալիս, թափվում ծովը… Եվ նա՝ հուզախառով ու արցունքացոլ աչքերով, կրկին ու կրկին հիշեց իրենց հանդիպումն ընկերոջ բնակարանում ու իր մարող շշուկով ասված խոսքերը՝ «Ոչ, ոչ, չհամարձակվեք, չհամարձակվեք», որը «Բոլերոյի» ահագնացող երաժշտության տակ միայն իրեն՝ կնոջն էին լսելի: Բայց դա նույնիսկ դիմադրության փորձ չէր, այլ բնազդային ինքնապաշտպանության նվաղ դրսևորում, իսկ տղան, բուռն կրքից շնչահեղձվելով, ինչպես կատաղի անսանձ հովատակ, այնպիսի մոլուցքով տիրեց նրան, որ հառաչի հետ միասին ասես կանգ առավ իր շնչառությունը… և նա՝ անկամ ու նվաճված, չհասցրեց անգամ մտածել դիմադրության մասին:

Կինը՝ հայացքը անխոով ծովին, նախատում էր ինքն իրեն, որ արժանապատվություն չունի, այնտեղ, ընկերոջ բնակարանում տրվեց նրան ու տրվում է այստեղ, ավազների մեջ ու այս լերկ քարերի վրա…

…Նրանք նստել էին սալ քարերին, երազել էին, ճայերը պտտվել էին նրանց գլխավերևում, կարոտով կանչել էին, ջրերի վրայով սահել էին՝ ճերմակ փետուրները ջրերի կապույտին քսելով, իրենք նայել էին: Լողազգեստով պառկել էին քարերին ու վազվզել տաք ավազների մեջ, ու միշտ էլ կինը մտածել է այն մասին, որ պետք է բաժանվեն, այդպես անհնար է շարունակել: Ի՞նչ իրավունքով և մինչև ե՞րբ:

– Ես քեզ չեմ մեղադրում, – խոսեց կինը:– Ես եմ մեղավորը: Նման հարցերում կանայք, միայն կանայք են մեղավոր:

– Փոշմանե՞լ ես:

– Փոշմանե՞լ:– Կինը մի պահ խորհում էր, հետո ասաց վճռական:– Ոչ: Ափսոսանքը՝ դա անիմաստ զգացմունքայնություն է: Միակ բանը, որ կարելի է ափսոսալ կյանքում, դա այն է, որ դու ուշադրությամբ ու հոգատարությամբ ես շրջապատել նրանց, ովքեր դրան արժանի չէին: Հենց դրա համար էլ անիմաստ է ափսոսալը, որովհետև անօգուտ է, զուր տեղն ինչո՞ւ ափսոսալ, միևնույն է, այն, ինչ եղել է, վերադարձնել, ուղղել արդեն անհնարին է… Ինքս էլ չգիտեմ ինչպես ստացվեց այս ամենը: Անուշ երազ էր սա: Եվ հիմա պիտի ընդհատվի այդ երազը: Չեմ փոշմանել ու երբեք չպիտի փոշմանեմ: Պարզապես ինձ համար ապրում էի: Եվ երջանկությունը, թվում էր, հենց այդ է, որ կար: Ուրիշ երջանկություն չի լինում: Դու ամեն ինչ տակնուվրա արեցիր: Բայց դու մեղավոր չես բնավ: Ես այն չեմ մտածում, ինչ ասում եմ:

– Իհարկե, դու ես մեղավոր: Ինչո՞ւ շուտ ամուսնացար: Չէի՞ր կարող սպասել:

– Եթե իմանայի, որ պիտի հանդիպեմ քեզ… Հարյուր տարի կսպասեի… Բայց դու ինձ չէիր առնի:

– Ինչու: Կառնեի, ազնիվ խոսք կառնեի: Ուրեմն դու կասկածո՞ւմ ես, որ քեզ սիրում եմ:

– Չեմ կասկածում: Երբեմն նույնիսկ ինձ այնպես է թվում, թե դա է ինձ պահում: Ուր էլ լինեմ, մտածում եմ այն մասին, որ դու կաս, որ երբ ուզենամ՝ կարող եմ զանգել քեզ և թեթևություն եմ զգում դրանից:

– Իսկ հետո ես կամուսնանամ, և դու կմոռանաս ինձ, – հայացքը ջրերին, անբռնազբոս ասաց տղան:– Բոլորովին չես էլ հիշի:

Կինը հանկարծակի նայեց նրան:

– Լռիր, աղաչում եմ… Այդ ինչե՞ր ես խոսում…

Տղան ցանկացավ գրկել կնոջը:

Կինն իբր վիրավորվել էր, իբր չէր ուզում, որ տղան գրկեր իրեն, համբուրեր, նա դեմքը այս ու այն կողմ էր փախցնում, սակայն տղան զգում էր, որ կինը երկարաձգում է հաճույքը, նա ավելի ուժգին սեղմեց նրան, շուրթերով գտավ բերանը… Տղան միշտ մոլեգին էր, դա դուր էր գալիս կնոջը, շուրթերը պինդ էին. դա դուր էր գալիս կնոջը… «„Սիրելիս, սիրելիս, սիրելիս, – հևոցով շշնջում էր տղան, – Ես սիրում եմ քեզ, մի՞թե կասկածում ես“»:

…Տղան հոգնած պառկել էր ավազին, դեմքը դեպի երկինք: Կինը նստել էր նրա կողքին, ձեռքերով գրկել ծնկները

– Ես ճիշտ չէի ասում, – խոսեց տղան: – Կատակում էի, ինձ թվում է, ես արդեն ոչ ոքի սիրել չեմ կարող… Երբ դու իմ կողքին ես, շուրջն իմ այլևս ոչինչ չեմ նկատում, այլ պարզապես զմայվում, գերվում, հպարտանում եմ քեզանով ու քո սիրով: Աշխարհիս երեսին յոթ հրաշքլիք կա, բայց կա մեկը ևս, ութերորդը, դու ես այդ ութերորդ հրաշալիքը՝ ամենից էկզոտիկն ու ամենից գեղեցիկը… Պիտի ամուսնանամ, – կրկնեց նա, – բայց ինձ թվում է, որ իմ և նրա միջև պիտի լինես դու… Ես նրա մեջ պիտի որոնեմ քեզ ու չպիտի գտնեմ… Ես դա գիտեմ…

««Ես նրան խանգարում եմ, – մտածում էր կինը, – նա իմ պատճառով չի ամուսնանում: Կհեռանամ, ինչո՞ւ խանգարեմ…«»: Նա մատներով հանդարտ շոյում էր տղայի դեմքը, մատները երկար պահում էր տղայի տաք շուրթերի վրա:

– Իսկ դու նրան սիրո՞ւմ ես (տղայի խոսքը կնոջ ամուսնու մասին էր) :

– Չգիտեմ, – հանգիստ ասաց կինը:– Մինչև քեզ՝ թվում էր այո: Իսկ հիմա չգիտեմ: Ինքը ինձ սիրում է: Դա նրան կուրացնում է և մտքով անգամ չի անցնում, որ ես կարող եմ դավաճանել նրան, սիրել ուրիշի: Մեզ մոտ, տպարանում, գիտեն, որ ես սիրում եմ քեզ: Քո ինչ-որ մի գիրք աղջիկներից մեկը գտավ ինձ համար: Այնտեղ, տպագրական մեքենաների աղմուկի մեջ, ես քո մասին եմ մտածում, ճանապարհին, ավտոբուսում, քո մասին եմ մտածում… Իսկ նա կարծում է, թե ես աշխարհի ամենաերջանիկ կինն եմ:

– Բաժավիր, – հենց այնպես ասաց տղան:

– Իսկ հետո՞:

– Միասին կգնանք ուրիշ քաղաք:

Կինն իհարկե, հասկանում էր, որ այդպես լինել չի կարող: Հիմա նա այդ բառերն ասում է, ճիշտ է, բայց չի լինի: Դա չի լինի: «„Իմ և նրա միջև անդունդներ կան: Նա հիմա դա չի հասկանում“»: Այդ մասին էր մտածում կինը, սակայն ուրիշ բան ասաց.

– Նա առանց ինձ չի կարող: Նավթային ինժեներ է, ծովում է աշխատում: Երբեմն երկու շաբթով չի գալիս: Ու այդ ընթացքում տասը-տասնհինգ նամակ է գրում: Դու դա պատկերացնո՞ւմ ես: Ընկերուհիներս երևի նախանձում են, չհասկանալով, որ ուրիշի կյանքը միշտ էլ գրավիչ է թվում ուրիշին, բայց ոչ ոք չգիտի, թե իրականում ինչ է տեղի ունենում այնտեղ: Իմ ծանոթներից մեկը ճիշտ է ասում, որ ուրիշի կյանքը ուրիշի պատուհանի է նման, որովհետև, եթե նույնիսկ այնտեղ, պատուհանագոգին ծաղիկներ են, դա դեռ չի նշանակում,

թե ներսում դրախտ է: Ես գիտեմ, – շարունակեց դառնագին, – նա կխելագարվի… Իսկ երեխաները… – Կինը մի պահ լռեց: – Չէ, էլ չենք հանդիպի, վերջին անգամն է սա:

Նրանք մոտ էին և անդորր էր: Եվ ջրերը ծփում էին, մեղմիվ շառաչում էին: Եվ հորիզոնից- հորիզոն ձգված էր ծովը, ծովը սև, համատարած ցել էր թվում, ցելը փայլկտում էր աստղալույսի տակ: Եվ լուսինը, որ նոր էր ելել ծովի այն կողմից, արահետ էր ձգել սև ցելերի վրայով:

– Երանի չհանդիպեինք, – լռությունը խախտեց կինը:– Այնպես հեշտ էր ապրելը: Շատ եմ մտածել այդ մասին: Ինչո՞ւ հանդիպեցինք: Հիշո՞ւմ ես մեր հանդիպումը ընկերոջդ տանը: Երբ մենակ էինք: Հիշո՞ւմ ես:

– Այո:

– Հետո ես լաց եղա… Ախր, ես այդպես չէի ուզում… Պարզապես չէի հասկանում, թե ինչ է կատարվում ինձ հետ. Ես կարծես թե ես էի, ու՝ ես չէի…

– Հետո նստել էինք իրարից հեռու, – հիշեց տղան:– Ես քեզ չէի բռնել, չէի պահում, իսկ դու շարունակ ասում էիր. «„Թող ինձ, թող գնամ“»: Ու չէր գնում:

– Չէի կարողանում: Եթե կարողանայի, կգնայի: Չէի մնա: Թվում էր՝ տարիներ շարունակ որոնել էի քեզ ու գտել. Վախենում էի մի քայլ անգամ անել ու կորցնել… Թեկուզ ներքուստ անհանգիստ էի, ինչ-որ բանից վախենում էի, թե հատկապես ինչից՝ չէի հասկանում: Բայց չէի գնում:Հիմա եմ հասկանում, որ ինձանից էի վախենում… Այս օրից… Եթե այն ժամանակ բաժանվեինք, հեշտ կլիներ…

Տղան լուռ էր: երկար քայլեցին՝ ջրերի ճողփյունը ականջներում: Ալիքները շարունակ խշշում էին:

Կինը նայեց ժամացույցին:

– Ուշ է, – շշնջաց նա: -Գնանք… Հիմա կինոյից տուն կգան, պետք է ընթրիք տալ նրան…

Տղան նայեց նրան:

– Մի վիրավորվիր… Նրան ո՞վ պիտի ընթրիք տա:

Նա մոլեգնորեն նորից գրկեց կնոջը, համբուրեց նրա տաք, անհնազանդ շուրթերը:

Քիչ առաջ տղան ավազի վրա գրել էր.

«„Ես խելացնոր կերպով սիրում եմ քեզ“»: Մազերը կարգի բերելիս, կինը տեսավ, որ ալիքը եկել, տարել է տղայի գրածը:

– Ամեն ինչ այսպես է, – տխուր ասաց կինը, – Կա ու չկա:– Հետո նայեց դեպի ծովը: Ծովը խաղաղ էր, հանդարտ: Նայեց ժայռակերպ սալ քարերին, հայացքով չափեց ծովափը, նայեց ժայռերին: Այստեղ ամեն ինչ հարազատ էր նրան, և հիմա ինքը բաժանվում էր այդ բոլորից: Կինը նայում էր տխրամած, ասես այստեղ նրա ողջ կյանքն էր անցել, և հիմա ընդմիշտ բաժանվում էր դրանից:

Քարքարոտ նեղ արահետով սկսեցին բարձրանալ դեպի ավտոբուսի կանգառ: Օդում սև չղջիկներ կային: Չղջիկները պտտվում էին նրանց գլխավերևը, թափով իջնում էին, քիչ էր մնում թևերով դիպչեին նրանց:

Տղան նայում էր սև չղջիկներին և մտածում էր ճայերի մասին: Ձյունասպիտակ ճայերի, որ երևի ինչ-որ շատ հեռու արևոտ տեղ էին, հեռվում, երկինքն ու ծովն իրար ձուլող հորիզոնից անդին, և հանդարտ պտտվում էին կապտավուն ջրերի վրա:

– Դու հիմա քո ճայերի մասին ես մտածում, – ասաց կինը:

– …

– Դու ճայերի սիրահար ես: Ես դա գիտեմ: Դու բանաստեղծություններ շատ ունես ճայերի մասին:

Տղան ուշադիր նայեց կնոջը, մթության մեջ կնոջ մազերը սև էին, այտերը թուխ էին, ամբողջ դեմքը թուխ էր:

– Եթե ես ճայերի սիրահար եմ, ապա սիրահար եմ նաև քեզ: Դու նման ես գեղեցիկ ճայի, -ժպտաց նա:– Դու իմ թուխ ճայն ես…

Տղան մտածում էր այն մասին, որ երբեմն հարկ է լինում բաժանվել նրանից, ում սրտանց սիրում ես, որպեսզի առաջվա նման սիրես նրան:

Աջ ձեռքով գրկած կնոջը, նրանք բարձրացան բանուկ արահետով, իսկ երբ երևաց կանգառը, տղան ասաց

– Ես այստեղ կկանգնեմ, դու գնա, ծանոթներ կլինեն հանկարծ:– Տղան մատները քսեց կնոջ շուրթերին:– Մնաս բարով: Ես քեզ երբեք չեմ մոռանա: Երբեք-երբեք:

– Ես նույնպես: Ես նույնպես չեմ մոռանա: Ես չեմ կարող մոռանալ, եթե նույնիսկ ուզենամ: Եթե նույնիսկ շատ ուզենամ: Աստված իմ, ամեն ոք կարող է տեսնել ինչ տեսք ունես, բայց ամեն ոք չէ, որ կարող է իմանալ, թե ինչ է կատարվում քո հոգու խորքում: Հավատա, լինում են րոպեներ, որ ապրել չես ուզում, այլ ուզում ես թախծել, միայն թախծել ու լալ, Ինչո՞ւ ես սիրեցի քեզ, ասա, ինչո՞ւ եմ սիրում, – կնոջ ձայնը դողաց, աչքերը լցվեցին արցունքով:– Ասա ինձ, ո՞ւմ համար է անտանելի ծանր՝ նրա՞, ով հեռանում է, թե նրա՞, որից հեռանում են:

– Նրա, ով խենթորեն սիրում է:

– Ես հեռանում եմ: Ինձ համար անչափ ծանր է, որովհետև խենթորեն սիրում եմ քեզ… Ապրիր և հիշիր:– Նա սեղմվեց տղային: Կինը չէր ուզում նրանից պոկվել:– Ուրեմն վե՞րջ, էլ չե՞նք հանդիպելու… – Նա այլևս չէր կարողանում պահել արցունքները: -Գիտե՞ս, ամենից սարսափելին ոչ թե անփոխադարձ սերն է, այլ երբ այն փոխադարձ է, բայց դուք միասին չեք:

Հեռվում երևաց ավտոբուսը:

– Մի անգամ էլ հանդիպենք և վերջ, – հանկարծ ասաց կինը:

Տղան լուռ էր:

– Միայն մի անգամ:

– Լավ, – ի վերջո ասաց տղան: Ուզում էր ասել. «„Ոչ“», բայց, ինքն էլ չիմացավ ինչպես, ասաց՝ «„Լավ“»:

Կինը նայեց նրան լուսաշող աչքերով, շրջվեց, գնաց դեպի կանգառ: ճանապարհին շրջվեց՝ մի անգամ ևս տղային նայելու, և ձեռքով հրաժեշտ տվեց: Նա երևի ժպտաց մթան մեջ:

Ավտոբուսը գնաց: Թուխ ճայը չկար: Սպիտակ ճայերը չկային: Տղան մենակ էր:

Ներքևում, ժազոաբեկորներից այն կողմ, երևում էր ծովը: Ծովն ասես համատարած սև ցել էր, և լուսինը շողշողուն արահետ էր կապել սև ցելերի վրայով… Ընկնես այդ արահետն ու գնաս, գնաս դեպի այնտեղ, ուր ոսկեգօծ արևի ներքո ճվում, ճախրում են ճերմակաթև ճայերը…

==========

ԷՍՍԵ

Է Ն Լ Ո Ռ ՈՒ Ձ Ո Ր Ն Է…

Ուղիղ քառասուն տարի առաջ չքնաղագեղ մի աղջկա՝ Ադրբեջանի բժշկական ինստիտուտի առաջին կուրսի ուսանողուհի Ռիմա Հարությունովայի հետ որոշեցինք Բաքվից ճանապարհվել Ղարաբաղ, իմ հայրենի գյուղ՝ Չլդրան, այնտեղից Շահումյանով, Գետաշենով, Գյոգ-գյոլով, Խանլարով, Թբիլիսիով՝ Դսեղ, տեսնելու այն վայրերը, ուր ծնվել, մեծացել էր ինձ համար այնքան պաշտելի Հովհաննես Թումանյանը:

Քառասուն տարի է անցել այդ օրվանից, ինչքան բան է փոխվել, ինչքան լավ ու վատ օրեր են եղել, լավը՝ քիչ, վատը՝ շատ, ինչքան ջրեր են հոսել: Պարզ է, ավաղ, չկան այլևս բոլոր նրանք, ովքեր տեսել էին Թումանյանին և որոնց հետ մենք բախտ ունեցանք ծանոթանալու այն ժամանակ, լսելու նրանց սրտառուչ պատմությունները մեծ բանաստեղծի մասին: Այդ հին, անրջական օրերից այս գրառումներն են մնացել սոսկ՝ դեղնած, խունացած թղթերի վրա:

Լ.Ա.
Սանկտ—Պետերբուրգ
2008թ.

…Երբ դանդաղ ելավ, սահեց Մոսկվա-Երևան ճեպընթացը, Քոլագերան կայարանի միակ մայթին մնացինք ես, տասնութամյա իմ ուղեկցուհի Ռիման՝ բժշկական ինստիտուտի առաջին կուրսի ուսանողուհի, և կայարանի կարմիր գլխարկավոր սլաքավարը:

– Ամոթ չըլի հարցնելը, էդ ո՞ւր եք գնում, – ծոր տալով հարցրեց սլաքավարը:

– Դսեղ, -ասացի ես:-Հեռո՞ւ է

– Նայած: Եթե սպասեք լուսանա՝ մոտիկա, այսինքս՝ կարաք մաշինով գնաք. ժամը տասնմեկին ալաբաշը գնումա: Թե չէ, դուք գիտեք. հրե՛ն կածանը, էսպես դիք որ գնաք, երեք-չորս կիլոմետր կըլի:

Եվ հիմա քարքարոտ, նեղ կածանը մեզ քաշելով տանում է: Իսկ ամենուր սև մութ է, անտառները լուռ են, ձորերը ամպերի տակ խոր քնած են ու էլի լուռ են, արդեն հալվում, ցրտում է տաք գիշերը, և այս շուրջ բոլոր լռության, այս մութ խավարի մեջ Դեբեդն է միայն վշշում:

Քայլում էինք մթան մեջ սպիտակին տվող կածանով և լավ էր, որ հատուկենտ աստղեր կային դեռ, լավ էր, որ կիսալուսինը կողքի ընկած գնում էր երկնքով, թե չէ ճանապարհը չէր երևա, իսկ այդ ճանապարհը ժայռերի վրայով էր անցնում, ներքևում ձորեր են՝ անդնդախոր, մթին:

Մենք չգիտեինք ճանապարհը, կածանի տուտը բռնած գնում էինք, և մեզ ուղեկցողը աստղերն էին, կիսատ լուսինն էր և Թումանյանը. որովհետև անհնարին է, որ լինես այս ձորերում ու հոգուդ չիշխի մեծ բանաստեղծը, քեզ հետ չլինի նա, չլցվես նրանով, չմտածես, որ այս կածանով հազար անգամ անցել է նա:

Լուսանում էր արդեն, երբ հասանք լեռան կատարը ու ետ նայեցինք. ներքևում Լոռու ձորն էր, պատմական Տաշիրքի հրաշք ձորը, ուր Դեբեդը «„սգում էր մենակ խավար անդնդում“»:

Մենք լսում էինք նրա միալար վշշոցը, որ մեկ կտրվում ու նորից լսվում էր:

Թումանյանը նստել է այս դարավանդին, նայել է դեպի Լոռու ձորը, սիրտը ցավել է, երբ տեսել է, որ քանդում են ձորերը, երկաթուղի են գցում. «»…ձորերին մտիկ եմ անում, որ են քարափները քանդելիս տեսնում եմ, սրտիս ծերը մղկտումա, ոնց որ թե մարդի երեխեն թշնամու ձեռին քրքրելիս ըլեն ու մարդ կարենա ոչ թե օգնի…«»: Հետո ձորերով եկել՝ ո՛ւ…ո՛ւ…ո՛ւ…,

սուլելով անցել է Թիֆլիս-Ղարս գնացքը, մարդիկ ծաղիկներ են նետել շոքեքարշի անիվների տակ, գնացել գյուղերում պատմել են. «»…մի անասելի սև ջանավար է, մեկ միլիոն ձիու ուժ ունի, բերանը Արփաչայից էլ լեն է, ծուխ կհանե հազար պապիրոսի չափ»»: Շո- գեքարշի սուլոցից խրտնել, անդնդախոր ձորերում ու կիրճերում կորել են պախրան ու կխտարը. «»…եկավ ձորերումը ծղրտաց, էլ պախրա չմնաց, էլ կխտար չմնաց, փախան կորան…«»: Այստեղ, այս աստվածանիստ բարձունքին նստած տեսել է, թե ինչպես են ««ամպերը դանդաղ ուղտերի նման»» ձորից ջուր խմած բարձրանում: Ամպերը անցել են և երկնի կապույտի մեջ խրված երևացել են լեռները. «»…բարձր ու կանաչ լեռներ, դուք հայրենիքն ու գահը զով զեփյուռների, անուշաբույր ծաղիկների, սուրբ ցողերի ու շաղերի, անմահական սառն աղբյուրների, սև-սև ամպերի, հրեղեն կայծակների, ջրեղեն տարափների… Դուք՝ մոտիկ աստծուն, աստղերին, լուսնին, երկնային շնորհքներին ու գաղտնիքներին, վեհ ու վեհապանծ լեռներ…«»: Հետո, դեռ պատանի, դեռ տասնութը չլրացած, այս բարձունքից նայել է հայրենի Դսեղին, որ մի քանի հարյուր մետրի վրա է, նայել է իր տխուր Դսեղին ու աշխարհին պատմել.

Մեր գյուղն էն է, որ հպարտ,
Լեռների մեջ միգապատ,
Խոր ձորերի քարափի
Ձեռը տված ճակատի
Միտք է անում տխրադեմ.
Ինչ է ուզում՝ չգիտեմ…

Ինչ-որ մեկը ձիու կապը բռնած գալիս է մեր կողմը: Ծեր մարդ է, մոտեցավ «„բարի լույս“» ասաց ու սկսեց ուշադիր նայել.

– Ճանաչեցի ոչ, -վերջապես ասաց նա:

– Տեղացի չենք:

– Ո՞ւմ տունն եք գնում, – նորից խոսեց ծերունին:

– Թումանյանի:

Ինձ թվաց, թե սխալ արտահայտվեցի, բայց մարդը բոլորովին չզարմացավ:

– Կարելի ա, – ասաց նա:– Ուրեմն Օհաննեսի տունն եք գնում, – նա քիչ լռեց, ավելացրեց.- Օհաննեսն ասում էր մարդ պիտի էնպես ապրի, որ մեռնելուց հետո անունը հիշեն: Ինքն էդպես ապրեց:

– Դուք հիշո՞ւմ եք Թումանյանին:

– Բա ոնց: Իրենց կտերը կկանգներ, ժողովուրդը կհավաքեր, կխոսեր, խորհուրդներ կտար: Գեղացիք Օհաննես աղա էին ասում: Սպասեք ձիս կապեմ գամ…

Օհաննե՛ս աղա: Ամբողջ կյանքում մի լավ օր չտեսած, հազար ու մի պարտքերի մեջ խրված, ամբողջ կյանքը կողմնակի հոգսերով ծանրաբեռ, ժողովուրդների ճակատագրի ու ազգի տառապանքի ստրուկը՝ «„Օհաննես աղա“». «»…Երեխաներիս ուսման վարձի պատճառով, արգելել են ուսումնարան գնալ, տանս վարձը գրեթե կես տարով մնում է, պարտք անելու տեղ չի մնացել, և պարտքատերերս էլ համբերությունից դուրս են եկել““: 1902 թվականին ընկերները դիմում են գրել, ուզել են փող հավաքել: Թումանյանը շատ է վշտացել. „“…Դիմել հազար ու մի մարդու, – այդ առթիվ գրել է նա Փիլիպոս Վարդազարյանին, – գրել թե Հ. Թ. անապահով է, հիվանդ է, ընտանիք ունի, մի բան ավել ստորագրեք նրա բանաստեղծություններին… „“: Մի ուրիշ տեղ. „“…ինչ անենք, որ բանաստեղծ լինելով, նյութական նեղության մեջ լինելով, ապավինված եմ մի քանի մարդու օգնության, մի՞թե դեռ պետք է շրջաբերականով հոչակեմ իմ խեղճությունն ու նպաստներ ժողովեմ…„“: Նորից մի ուրիշ տեղ. „„խղճահարվում եմ մինչև անգամ, որ օգնում են ինձ որպես բանաստեղծի, ինձ թվում է, որ ես խաբված եմ, ուրիշներին էլ խաբում եմ, թե բանաստեղծ եմ ես…«»:

Մարդը բլրալանջին կապում է ձին, ետ գալիս: Ջրուցելով գյուղ ենք մտնում:

Դեռ նոր էր լուսացել, արևը սարերի ետևից դուրս չէր եկել դեռ, բայց գյուղի տանիքները արդեն արևի մեջ էին:

– Հրե՛ն Թումանյանի տունը: Թանգարանն էլ էնտեղ է:

Տուն-թանգարանի դիրեկտորը Թումանյանի Վահան եղբոր աղ- ջիկն է՝ Արմենուհի Թումանյանը: Նա սիրալիր, թումանյանական ժպիտը դեմքին, ընդառաջ է գալիս:

– Բարով եք եկել: Բայց շատ ափսոս, որ չեք կարողանա ամեն ինչ տեսնել, -ասում է նա, – տուն-թանգարանը նորոգում ենք… Սա Թումանյանի տունն է… Թումանյանի հետ, Թումանյանով ներշնչված, նրա հավերժական ստեղծագործությունների մեջ իդեալականացված ձորերով ու Դեբեդի վշշոցը մեր ականջում՝ նրա հայրական տունն ենք եկել՝ սրտներումս դող ու ակնածանք այն բոլոր հիշատակների հանդեպ, որ այստեղ պիտի խոսեն նրա մասին. որով- հետև այստեղ էր, որ դեռ մանկուց նրա հոգին իմաստավորվեց Դսեղի լուսնյակ գիշերներով ու անուշ զրույցներով, «»…ամառվա լուսնյակ գիշերները մեր դռան գերանների վրա շուրջ-բոլոր նստոտում էինք, հիացած պլշում Նեսոյի՝ ոգևորությունից գեղեցկացած դեմքին: Ու պատմում էր նա Հուրի-փերիներից, Զմրուխտ Ղուշից, Լիս ու Մութ աշխարհից…«»:

– Սա սալորենու այգին է, գարնանը, երբ սալորենիները ծաղ- կում են, չտեսնված գեղեցիկ են լինում:– Արմենուհու հանդարտ, միալար ձայնն է: – Սա այն տունն է, ուր ծնվել է Հովհաննես Թումանյանը, սա ձեթի ճրագն է, սա շապիկն է, ահա թիկնոցը, ահա կոշիկները, ահա փողկապը, սա խնոցին, սա ամբարը, սա Թումանյանի մոր ճախարակն է: Տունը եղել է հողե կտուրով: «»…Մի մեծ սենյակ ունեինք. օջախը միշտ վառած, երկու կողմից թախտեր, դոշակներ ու մութաքաներ դարսած…«»:

Բանաստեղծի տունը… գետնափոր, հողե հատակ, լույսը ընկնում է երթիկից, թոնիրը՝ տան կենտրոնում, բերանը տախտակով ծածկած, խնոցին առաստաղից կախ, օրորոցը…

– Մի՞թե Թումանյանը օրորոցում է մեծացել:

– Դուք ճիշտ եք: Թումանյանը ընտանիքի անդրանիկ երեխան էր, նրան տանը շատ էին սիրում: Մայրը նրան օրորոց չի դրել, ոչ էլ ճոճք: Այդպես է արել, որպեսզի միտքը պայծառ մնա, գիտեր երևի, որ մեծ մարդ պիտի դառնա, – ժպտում է Արմենուհին:

Այստեղ, այս նամշահոտ ու փոքրիկ տան մեջ է ծնվել մեծ բանաստեղծը, այստեղ է ապրել նրա Օհաննես պապը: Թումանյանը չի տեսել նրան, տատից ու տան մեծերից է լսել պապի ու իր նախնիների քաջագործությունների մասին: Եկվորներ էին Թումանյանի նախնիները, նրանք տասներորդ դարում, արշակունյաց փառքի վերջալույսին, երեսուն տարի ևս մեն-մենակ հաղթանակներով, ճակատ-ճակատի զարկելով պարսիկների ու արաբների հետ, ձանձրացած «„թողին իրենց հայրենի սրբազան Տարոնը, եկան բնակվեցին այստեղ“»:

Հզոր են եղել Թումանյանի պապերը: Նրանք պարսից Հասան խանի ասպատակության ժամանակ ժողովրդի գլուխ են անցել, պաշտպանել շրջակա գյուղերի խաղաղ բնակիչներին: Անվանի զինվորական է եղել Թումանյանի Օհաննես պապը ու հայտնի զրուցասեր (նրա թուրը մինչև հիմա էլ պահվում է) : Նա իր տան պատի տակ, ճանապարհի վրա, տասներկու քար է տաշել տվել, դրել, որ գյուղացիները գան ու զրույց անեն: Այդ նա, Թումանյանի պապ Օհաննեսն էր, որ Հասան խանի ժամանակ գնաց ուղտերով հաց բերեց, բաժանեց ժողովրդին, փրկեց նրանց: Պետական պաշտոնյաները, երբ գալիս էին հացահատիկ հավաքելու, նա չէր թողնում, որ գյուղացիները հացահատիկ տան.»»…ջուրը անցկացրեք, թող գնա»» – ասում էր նա պրիստավի մասին: Եվ, վերջապես, նա էր, որ իր հետ առաջին անգամ այս ձորերը մոմ բերեց, հայելի բերեց, նկարներ բերեց ու մի ռուս ջրաղացպան:

Ավելի անվանի ու հայտնի է եղել Օհաննեսի հայրը՝ Ավագիմ յուզբաշին՝ քաջ ու հաղթանդամ, Լոռու իգիթներից մեկը: Խաչատուր Աբովյանը ««Վերք Հայաստանում»» այդ

նրա մասին է գրում. ««Էս Օվագիմը, էս Լոռվա ձորերի աստվածը, էս սարերի արծիվը… էն սևացած, արևի, անձրևի տակ մուր դառած ունքերի տակից, որ աչքը չէր ընկնում մարդի երեսին, էնպես էր իմանում, թե կայծակն ա խփում, ու սար ու ձոր սևանում էր գլխին, գետինը պտտում, ու ինքը քար դառած մնում առաջին կանգնած»»: Օվագիմի հայրը՝ Մեհրաբը, Լոռու ձորերի նահապետն էր: Նրանից սարսափում էր թշնամին: ««Մեր ճամփեքը թշնամու համար փակ ու կապ պետք է լինեն, – ասում էր նա, – մեր տան դուռը ու մեր սիրտը բարեկամու համար ա բաց… Նամարդի համար մենք թուր ու թվանք ունենք…«» Հարյուր տարին թեպետ լրացել էր արդեն, բայց նա ամուր էր դեռ: ««Նրա վիթխարի, բարձր հասակը կորացել էր, նորից ամրացել, ճերմակ մազ ու միրուք բռնել կուրծք ու երես, աժդահայի ահավորության հետ խառնել-միացրել ծերության պատկառանքը»», – այսպես է բնութագրում Թումանյանը իր Մեհրաբ նախապապին:

Մեհրաբը 108 տարեկանում վախճանվեց: Մեռնելիս ցավով բացականչել է. «„Այ փուչ աշխարհ, արժե՞ր երկու օրվա համար ծնվել…“»

Սրանցից էր սերել Թումանյանը, սրանց ««սիրտն ու արինը»» կար նրա մեջ, դրա համար էլ անվախ էր նա, իր նախնիների նման նա էլ ժողովրդի գլուխ անցավ, երբ թշնամին մոտեցել էր Լոռու ձորերին. ««Լոռեցիներ, իմ քաջ հայրենակիցներ, փոքրաթիվ թշնամին մեր սարերին է հասել… Հավաքվեցեք մեր մութ անտառների նման, կանգնեցեք անսասան մեր սարերի նման, կրակ թափեցեք ու զարկեցեք մեր սարերի կայծակների նման: Թող թշնամին էլ տեսնի, աշխարքն էլ, որ կարելի է Էրզրումի վրից էլ անցնել, Ղարսի վրից էլ, բայց Լոռու սարերից անցնել չի կարելի…«»:

Արմենուհու հետ շրջում ենք տուն-թանգարանի բոլոր սենյակները:

– Թումանյանի հարյուրամյակին, որ գաք, ամեն ինչ պատրաստ է լինելու: Իսկ հիմա, ինչպես ասում են, գլուխներս խառն է, նորոգումներով ենք զբաղված:

Հետո քայլում ենք պարտեզում, զրուցում:

– Թումանյանի օրոք գյուղը վաթսուն-յոթանասուն ծուխ ուներ, – պատմում է Արմենուհին:– Իսկ հիմա հազարից անցնում է: Մարդիկ լավ են ապրում : Էլ ոչ Գիքոր կա, ոչ Համբո, – Արմենուհին ժպտում է:– Աշխարհը մեզ է նայում, պետք է շտապել, կիսատ գործեր շատ ունենք: Ողջ գյուղով ոտքի ենք ելել, որ հասցնենք…

Թումանյանի տան մոտ, եկեղեցու բակում, մամռապատ, հին-հին քարեր կան: Դրանց տակ են հանգչում մեծ բանաստեղծի նախնիները: Երբ մտանք եկեղեցու բակ, մի ծերունի՝ նստած մի քարի, հենված ձեռնափայտին նայում էր քարերին:

– Էստեղ ի՞նչ ես անում, Աբրամ բիձա, – հարցրեց Արմենուհին:

Ծերունին ծանր բարձրացրեց հայացքը, երկար նայեց:

– Կարացի ոչ ճանաչեմ:

– Հարստանալու ենք, – ժպտում է Արմենուհին, – ասում եմ էստեղ ի՞նչ ես անում:

– Զրից եմ անում, – շատ հանգիստ խոսեց ծերունին, իսկ ես հանկարծ հիշեցի Ժամանակ-ծերունուն. ««Աչքդ ինչ տեսնի՝ նրա սկիզբն եմ ես, միտքդ ուր հասնի՝ նրանից առաջ եմ ես, որ քարը վերցնես՝ տակին եմ եղել, ինչ մեռել գտնես, այն ես եմ թաղել…«»:

– Ի՞նչ զրից ես անում, – մեզ աչքով է անում Արմենուհին:

– Ինչ իմանամ… զրից եմ անում… Ասում են՝ եկ, վախիլ մի, կան- չում են… էս ոնց անցավ, է՛… երկու օր ապրեցինք ու հմի պիտի գնանք, փուչ, փուչ աշխարհ ա…

– Ինչքան էլ կանչեն, չգնաս, – Արմենուհին ձեռքը դնում է ծերունու ուսին:– Լսո՞ւմ ես, չգնաս, շուտով Թումանյանի 100 տարին լրանում է, կաց քեֆ արա… Թումանյանին ճանաչո՞ւմ ես:

– Յանի Օհաննեսի՞ն… խի՞ չեմ ճանանչում, հրեն էն քարը Օհաննեսի հոր քարն ա՝ Տեր-Թադևոսի: Օհաննեսը հորը շատ էր սիրում:– ««Ամենալավ ու ամենամեծ բանը, որ ես ունեցել

եմ կյանքում, այդ եղել է իմ հայրը…«»:– Լավ մարդ էր Օհաննեսի հերը, արինը ջուր անող մարդ էր, վեճ ու կռիվ վերացնող: Պատվավոր մարդ էր: Առաջին լամպը գեղումը նա է առել բերել: Իսկական անունը Ասլան է եղել: Էն մեկն էլ Օվագիմ յուզբաշու քարն ա, էս էլ մեր Սողոմոն աղայի քարն ա: Ամա Օհաննեսը շուտ գնաց, ջահել ջիվան:

– Ծննդյան հարյուր տարին շուտով լրանում է:

– Յա… – ծերունին տխուր օրորում է գլուխը, – երեկվա երեխան էր, էդ ե՞րբ թամամեց:

– Շուտով կտոնենք, ամեն տեղից մարդ է գալու:

– Դե շուտ արեք: Վախում եմ հասցնեմ ոչ: Բաքվիցն էլ ա՞ մարդ գալու, – հանկարծակի հարցնում է ծերունին

Արմենուհին բացատրում է, որ մենք Բաքվից ենք:

Ծերունին տեղում շարժվում է, աշխուժանում:

– Հա՞… էդ շատ լավ ա… Բաքու նավթումը սրանից քանի տարի առաջ աշխատել եմ… հազար իննհարյուր ութ թվին: Հմի երևի Բաքուն շատ ա փոխվել… Էյ գիդի հա… Որ Բաքու աշխատում էի, մի դարաբաղ- ցու թատրոնում մեր Անուշին շանց տվին: Որ տեհա, լացս եկավ: Դե գեղացիս ա, բեմ ելած խալխին հավասար լացացնում ա… գեղի կարոտը, հողի կարոտը առա… Օհանեսը ասում էր, որ Թիֆլիսից Դսեղ եմ գալի, ամեն անգամ, գիշեր ըլի, թե ցերեկ, որ պոեզդը մտնում ա Լոռվա ձորերը, ծմակներից փչող օդը խուտուտ ա տալի, լցնում թոքերս, զարթնեցնում: Վեր թռչելով նա ասում էր. ««Օրհնվես, հող…«»: Էդպիսի բան ա հողը…

Արմենուհին մարդ է ուղարկում, որ մի երկու ուրիշ ծերունիների էլ կանչեն: Ասես նրա կանչելուն էին սպասում, քիչ անց գայթելով գալիս են նրանք, բարև են տալիս ու նստում իրար կողքի:

– Սարգիս բիձա, Թումանյանից մի բան պատմիր, ընկերները լսեն, – ասում է Արմենուհին, – ո՞նց մարդ էր:

– Շատ լավ մարդ էր: Ոնց որ էսօր, հիշում եմ: Աչքիս առաջն ա: Եկավ, մազերս խառնեց, մոմպաս տվեց, հետո հորս հետ գնացին Բորչալու՝ ժողովի: Բա ո՞նց չեմ հիշում:

Նրանք նստել էին սալ քարերին, կողք-կողքի, նայում էին մեզ ու չիբուխ էին քաշում: Ես նայում էի նրանց ու մտածում էի, որ ոչինչ չի փոխվել: Սա Թումանյանի աշխարհն է, ինձ թվում էր նույնիսկ, թե ինչ որ տեղ ես տեսել եմ նրանց, խոսել հետները, որ ահա այս մեկը գյուղացի Համբոն է, մյուսը՝ ««Հառաչանքի»» -ի ծերունին, երրորդը անպայման Սուտլիկ որսկանն է, չորրորդը՝ Գաբո բիձան, և որ նրանք բոլորը միասին Կիրակոսին քարաբաղնիս սարքեցին, ու երբ արդեն մեռել էր Կիրակոսը, ««կտերը, արևումը նստոտած, նրանք պատմում էին, թե քանի-քանի հոգի է խեղդվել քարաբաղնիսից…«»: Ու չիբուխ էին քաշում, ինչպես հիմա:

– Որ գեղ գար, կհետաքրքրվեր մարդկանց ապրուստով, երեխաներին կամփետ կտար, հանաք բան կաներ բոլորի հետ, ծերերին կնստեցներ, պատմություն անել կտար, ինքը կգրեր: Էդպես էր:

– Դու ի՞նչ կասես, քեռի Եգեկ:

Ծերունին ծխամորճը հանում է բերանից, մի պահ մտածում:

««– Է՛… է՛…է, կրակ էինք անում, շուրջը նստոտում, մինչև կես գիշեր զրույց անում, հեքիաթ ասում, որը չիբուխն էր զոռ տալիս, որը քնում էր… քեռի Եգեկն էլ շվի էր ածում…«»:

– Ի՞նչ ասեմ… Օհանեսի հետ էնքան ենք ընկերություն արել:

Օհաննեսը, երբ մաքուր մարդկանց մասին էր խոսում, միշտ ասում էր. պախրան էն տեսակ զուլալ, անարատ կենդանի ա, որ երբ քարափներից իջնում է ձորը և ջրավազանը պղտորված ա տեսնում, պինչ չի կպցնում, ջրի մոտ նստում, էնքան սպասում ա, մինչև ջուրը զուլալվում ա ու նոր խմում ա էդ ջրիցը: Մաքուր մարդս, կասեր Օհաննեսը, միշտ էլ մաքուր

տեղից ջուր կխմի: Պախրի պես մաքուր մարդ էր Օհաննեսը… Էնքան եմ շվի ածել իրա համար… շատ էր սիրում…

Պատմում են ծերունիները, և դու տեսնում ես, որ Թումանյանը նրանց համար կենդանի մարդ է, նստում-վեր են կենում՝ նրանից են խոսում, նրանից մեջբերումներ են անում, Թումանյանն այստեղ երեխաների հետ երեխա է, մեծի հետ՝ մեծ:

Տասներեք տարեկան է եղել, որ հայրը նրան տարել է Թիֆլիս:

Թումանյանի մայրը, քույրերը, եղբայրներն ու մոտիկ հարևանները մինչև Ձաղի ձորը գնացել են, ճանապարհել նրան: Մայրը, տղային հրաժեշտ տալուց հետո, տուն է եկել ու լաց լինելով ասել է. ««Տղիս տարան»»: Նա չէր ուզում, որ իր ««քյորփա էրեխեն են անիրավ աշխարհին»» ընկնի: Թումանյանն իր ուղևորության մասին հետագայում գրում է ««Գիքորում»». ««Մի խաղաղ առավոտ էր, մի տխուր առավոտ: Տանեցիք ու հարևանները եկան մինչև գյուղի ծերը…«»:

Իր հայրենի սարերից, աղբյուրներից, լեռներից գնացել է Թումանյանը, բայց հոգով ու սրտով իր սարերում ու լեռներում է եղել, աղբյուրների մոտ: Ուր էլ եղել է, կարոտ-աչքի առաջ Դսեղն է եղել, Դսեղի հերանց գնացող արտերը.

Կլթացնում են, արտորում,
Արտույտները արտերում, —
Թռչում մանուկ հագուս հետ,
Ճախրում, ճըխում եթերում:

Հիշել է «„վես ու վիթխարի լեռների“» շուրջը տարածված անտառները, կարոտել.

Ո՞վ է ձեռքով անում, ով,
Հեռվից անթիվ ձեռքերով.
– Ձան, հայրենի անտառներ,
Դուք եք կանչում ինձ ձեր քով:

Հիշել է անգամ մանկության կենդանիներին. «„Իբրև հին կարոտ մտերիմների, հիշում եմ պոզատ գոմեշը՝ Նազլուն, Ծաղիկը (կով), Չերքեզը, Աբրաշը (եզներ), Թոբլան շունը, Ղայթարը (շան անուն), իմ պապոնց, մեր Մարինոս էշը, Ղռատ ձին…“»

Ես գիտեի, լսել էի, որ Դսեղից վերև, անտառի մեջ կա մի լճակ, որին դսեղցիները անվանում են «„Ծովեր“» և, որ Թումանյանը շատ է սիրել «„Ծովերը“»: Դեռևս 1922-ին նա դիմել է հողժողկոմ Արամայիս Երզնկյանին, խնդրել, որ «„Ծովերի“» մոտ գրողների հանգստյան տուն կառուցեն:

– Կուզենայինք տեսնել Ծովերը, – ասում եմ Արմենուհի Թումանյանին: Արմենուհին մի պահ նայում է ինչ-որ կետի, հետո ժպտալով ասում է:

– Խնդրեմ: Թումանյանն այնտեղ շատ է եղել: Գնանք:

Գյուղամիջով քայլում ենք:

– Այստեղ մի մարդ է ապրում, որի հարսանիքին Թումանյանը քավոր է եղել: Մտնե՞նք:

Բակում նստած էին «„հարսն“» ու «„փեսան“»: Ծերունին գլուխը քաշ, տեր-ողորմյա էր քաշում, պառավը՝ ձեռքերը ծնկներին (ասես նկարվում էր), նայում էր ճանապահին:

– Բարի օր ձեզ, – բարձր ասաց Արմենուհին:– Կարելի՞ ա…

– Եկեք, եկեք:– Պառավը վեր կացավ տեղից:– Ախչի, աթոռ բերեք:

– Ասում են Հովհաննես Թումանյանը ձեր քավորն է եղել, ճի՞շտ է, -հարցնում եմ ես:

– Հա, բա ոնց, ճիշտ ա, – հպարտացավ պառավը:– Կարողա՞, որ ճիշտ չըլի…

Ծերունին լուռ, դեռևս ոչինչ չհասկանալով, նայում էր մեզ:

– Արտեմ բիձա, Թումանյանի մասին մի երկու բան ասա, լսենք:

Ասես հենց դրան էր սպասում: Դասը սերտած աշակերտի պես ծերունին սկսեց.

– Մի անգամ հերը աղունը տարել էր աղալու. ջրաղացում տեսնելով միրգ ծախող մի գյուղացու, աղունը թողնում ա ջրաղացում, միրգը բեռնում ձին, բերում: Կինը հարցնում ա. «„Տերտեր, բա ալյուրը ո՞ւրա“»: Տերտերը թե՝ «„Ջրաղացում ջրաղացպանը դեռ աղում ա“»: «„Ախր, անտեր ա, կգողանան“»: «„Չունեվոր մարդիկ են, թող մի քիչ էլ գողանան“», – ասում է Օհաննեսի հերը: Օհաննեսն էլ շատ լավ մարդ էր: Էշմիածնա որբերը բերել տանը պահում էր: Մի օր էդ որբերին շատ հեքիաթներ ա պատմել, ծիծաղացրել ա, հետո, որ որբերը քնել են, ինքը գնացել, պարտեզում նստած լաց ա եղել… ախպերն ա տեսել…

Ու դեռ՝ «„Օհաննե՛ս աղա“»…

Ծերունին լռում է:

– Էլ ի՞նչ գիտեք, հայրիկ:

– Հա, Օհաննես Թումանյանը ուսում շատ էր սիրում, ուսումնասեր մարդ էր, նրա պես ուսումնասեր մարդ, ես կյանքիս մեջ տեսած չեմ: Որ գեղ գար, իսկույն գեղիցը կհարցներ: Մի անգամ, էլի որ գեղ էր եկել, գնացինք գանգատ արինք: Առաջ դպրոց չկար, ասացինք, հիմա էլ դպրոց կա, ամա շատերը իրենց երեխեքին դպրոց չեն տալի: Ասաց՝ օրինակ, ո՞վ: Ասացինք՝ Ալեքսին: Կանչել տվեց: Ալեքսին եկավ, թե՝ բարով ես եկել, Օհաննես ջան: Օհաննեսն էլ թե՝ բարիդ եմ եկել: Էս ոնց ա, քեզնից բողոքում են: Երեխեքին խի՞ չես դպրոց տալիս, որ աշխարհքի լիսն ու մութը ջոկեն, գրաճանաչ դառնան, խավարումը չմնան: Ալեքսին էլ թե՝ Օհաննես ջան, չկա, բա որ ըլի, դարգիլ չե՞մ, ըրեխա որդի՞ան՝ կա ոչ: Երկուսին ոչխար եմ դարգում, երկուսին կովեր, մինը էշն ու ձին ա պահում, մինը դուռն ու կտուրն ա ավլում, երկուսն էլ՝ գեղ ենք, տուն ենք, պետք են գալիս: Ժողովուրդը տվավ ծիծաղեց, ամա Օհաննեսը ծիծաղեց ոչ:

«„Ամեն ինչ անցողական ա, – ասաց Օհաննեսը, – ամա ուսումը չէ. ամեն ինչ կվերանա. տավարն էլ, ոչխարն էլ, ամա ուսումի տվածը՝ չէ: Լավ բան չես անում“»:

– Ձեր հարսանիքը հիշո՞ւմ եք, – հարցնում եմ:

– Հիշում եմ… Օհաննեսը մեր քավորն էր, հարսանիքը շատ լավ անցավ, շուլուխով, օրենքով: Ասես երեկ էր, ափսո՜ւզ…

Ծերունու հիշողությունը լավ չէր: Մինչ նա կհավաքեր մտքերը, կինը՝ Մարիամը, ամուսնուց ջահել ու շատ աշխույժ մի պառավ, սկսեց.

– Ես ասեմ: Թումանյանը իմ ու նշանածիս քավորն էր: Հարսանիքի մյուս օրը գնացել եմ աղբյուրը՝ Կաթնաղբյուր, մոտիկ ա, կուժն ուսիս գալիս եմ, մեկ էլ տեսնեմ Թումանյանը: Ծանդր մարդ էր, խելոք: Մեծ տղի հետ կանգնած էր: Կուժն ուսիս գալիս եմ, մեկ էլ Թումանյանը տղին ասում ա. «„Համլիկ, մեր էս թազա հարսին նկարիր“»: Մանչում եմ, ոնց եմ մանչում, էրեսս էրվում ա: Կարացի ոչ փախչեմ, մնացի շշկլած, կանգնած: Թումանյանի տղեն նկարեց, ամա ես տանը ասեցի ոչ. սկեսուրս ձեռիցս կբռներ, դուրս կաներ: Էդպես էլ ոչ մեկին ասացի ոչ: Էդպես էլ անցավ գնաց ու շատ բաների հետ էդ էլ եմ հիշում:

– Դե հիմա էլ ինձ ականջ արա, – խոսք վերցրեց ամուսինը:– Օհաննեսը ինչ գրել ա, ճիշտ ա գրել:Անուշի մասին գրածն էլ ճիշտ ա: Անուշը Գոգնաց Աթնի աղջիկն ա, շատ սիրուն ա ելել: Սարոն էլ Չոփռի տղեն ա: Իրար սիրել են, ամա ոչ ախպերն ա ուզել, ոչ էլ հերը: Էդպես ա եղել: Էն էլ եմ հիշում, որ Օհաննեսը տղերքի հետ ձի նստած սարում ման գալիս ա ըլել, որ ժողովուրդը կռիվ չանի: Դրա համար էլ Նիկոլը բռնեց Օհաննեսին, տարավ Թիֆլիսա բանտումը նստացրավ, ասավ՝ քո ի՞նչ գործն ա, որ խառնվում ես: Օհաննեսի հինգերտինքը գնացին և բանտից դուրս բերեցին Օհաննեսին: Մի քանի անգամ էլ իմ ձիով ա գնացել սարերը… Էն էլ եմ հիշում, որ Օհաննեսը ավլուկ էր ուզում, փիփերտ էր ուզում… Ուղարկում էինք… Էն ժամանակ մաշինա չկար, երեք օրումը մինչև Թիֆլիս գնում էինք… Մեզ համար Թիֆլիսիցը յուղ ա ուղարկել:

– Պուլիկը մինչև հիմա էլ պահում ենք, – ասում է Մարիամ մայրիկը:

– Հա, որ գեղ գար, կխնդրեր, որ ծեր մարդիկ իրա համար բաներ պատմեին, ինքը գրի կառներ, դիմացը փող կտար… մի անգամ էլ ես եմ մի լավ բան պատմել, հիմի չեմ հիշում ինչ,

ինձ երկու մանեթ ա տվել… Մի անգամ էլ գնացի Թիֆլիս, մի տեղով անցնելիս, տեհա մեր գեղացի երկու մարդ գինի են խմում: Ասացին Օհաննեսը հիվանդ ա, գնանք մոտը: Գնացինք: Ծանդր հիվանդ էր: Դուռը բաց արինք, տեսանք սեղանը մոտեցրել ա, որ բռնի վեր կենա. Բռնել ա սեղանից, մի քիչ բարձրացել ա ու չի կարողանում շարժվել: Մեզ որ տեսավ, շատ ուրախացավ: «„Էդ ոնց ա եղել, որ Ռոստոմի խոտը էրվել ա“», – տխուր ասաց նա: Միշտ էդպես կհետաքրքրվեր գեղացիների դարդովը:

Արևը բարձրացել, կանգնել է լեռների վրա: Հնձած արտերի միջոցով գնում է նեղ ճանապարհ: Գնում ենք ««Ծովեր»»՝ Թումանյանի սիրած վայրերից մեկը: ««Ծովերի»» մոտ, կանաչ խոտերին պառկած, Թումանյանը նայել է դեպի մաքուր երկինքը, ժամերով նայել է վերջալույսի վարդագույն ամպերին, հետևել է Չաթինդաղի գագաթին նստած թխպերի խաղին, նրանց դանդաղ-դանդաղ ընթացքին ու երազել… Լսել է ծղրիդի ճռռոցը ու երազել… ««Լսե՞լ եք էն թախծալի ճռռոցը, որ ծաղկի բուրմունքի, կանաչի ու թարմության հետ խառնված հոսում է գարնան դաշտերի վրայով… Գուցե էդ ժամանակ մի ծառի կամ թփի տակ պառկած խորասուզվել եք ջինջ կապույտ երկնքի խորության մեջ, մաքուր, թեթև երազների մեջ, իսկ չորս կողմերը համատարած ճրռռ… ճրռռ…«»:

Արևից ծառերը երկար ստվեր էին գցել:

– Հրեն Ծովերը, – ասաց Արմենուհին, – շուտով այստեղ գրողների հանգստյան տուն կկառուցվի… 22 թվին Թումանյանը դիմել է, հիմա սկսում ենք շինարարությունը՝ մոտ 47 տարի հետո… Շատ գեղեցիկ հանգստավայր է լինելու:

Մենք հասնում ենք Ծովեր, նստում ենք ստվերախիտ ծառերի տակ: Այստեղ, գուցե հենց այս ծառի տակ, որտեղ մենք ենք նստած, տիեզերական այս լռության մեջ, նստել է Թումանյանը, նստել են Իսահակյանը, Շիրվանզադեն, Վալերի Բրյուսովը, Տերյանը, Լեոն և մեր մյուս երախտավորները: Ճարմանայի անհաջող ճակատամարտից հետո այստեղ է դադար առել Վարդան Մամիկոնյանը ու նորից համալրված, գարնան հեղեղի պես գնացել գրոհի: Այստեղ, 1896 թվականին ընկերներով քեֆ է արել Ստեփան Շահումյանը: Հետագայում Շահումյանը շատ է մտաբերել Հովհաննես Թումանյանի հետ անցկացրած պահերը, ջալալօղլեցի Սերգեյ Տեր-Գրիգորյանի աղջկան՝ Քեթևանին, որին բոլորը քնքշանքով Քեթո էին ասում, և նրա կրտսեր քրոջը՝ փոքրիկ Ելենային (Լելուշ) : Շահումյանը նամակ է գրել իր սիրած աղջկան՝ Քեթոյին, խոսքը համեմելով Թումանյանից մեջբերած մի հատվածով՝ ««Ուր Չաթինդաղի…«», և ավելացրել է Թումանյանի ոգով.

««Եվ ուր վերջապես ապրում են երկու սիրելի քույրե

Քեթոն է մեկը, մյուսը՝ Լելուշ

Իրենց երկրի պես քաղցր ու անուշ»»:

(Ի դեպ, Քեթոն՝ Ք. Տեր-Գրիգորյանը, հետագայում դարձավ մեծ հեղափոխականի՝ վտանգներով լեցուն կյանքի հավատարիմ ընկերուհին) :

Նստում, հանգստանում ենք կանաչ խոտերին: Ծառերի ստվերները պառկել են լճի վրայով, և ջուրն այնպես վճիտ է…

Ես մտնում եմ անտառ ու խորանում եմ անտառի մեջ: Մարցի անտառներն են: Հաճարենիների կատարները երկինք են հասնում: Արևը դժվարությամբ է ընկնում անտառ և այնպես հով է, այնպես մութ ու խաղաղ…

Վեր է կացել են սարում

Մեր Չալանկը իր թևից.

Գնում է մութ անտառում,

Քաջ ախպերս ետևից:

Պարզ, հասարակ, ու էնքան պարզ ու հասարակ, որ թվում է նստես, դու էլ էդպես կգրես: Բայց չէ, ինչքան պարզ ու էնքան էլ հանճարեղ է:

Զրնգում են նրանք խոր

Էն անտառում կուսական.

Ես կանչում եմ նորից նոր,

Ինձ թվում է, թե՝ կգան…
Զո՛ւր… վաղուց են, ախ, նրանք
Մեր սարերից գնացել.
Էդ գիլ ձեներն են մենակ Իմ ականջում մնացել…
Սուս… լռություն է. ոչ ձայն, ոչ ծպտուն. լռության մեջ թշշում է մթին անտառը:

Հետո մենք գնացինք նայելու Դիդը: Գյուղի վերևի մասով էինք անցնում: Մի ջինջ, սառն առվակի վրայով անցնելիս, մեկն ասաց.
– Թումանյանը էստեղ լողացել ա:
Ակամայից կանգ առա, նայեցի ներքև վազող ջրերին:
– Այսինքն փոքր ժամանակ. գրած էլ ունի:
Էն առվակում կեսօրին
Երբ որ շոգից նեղանում
Գնում էինք լողանում…
– Էս առվակի մասին ա ասում: Մարոն էլ հրեն էնտեղ ա թաղված:
Մեզ ցույց տվեցին հեռվում, մեն-մենակ կանգնած մի ծառ:
– Էնտեղ ա թաղված: Հիշո՞ւմ եք.
Էն մենավոր ծառի տա
Փոս փորեցին մի խորին
Առանց ժամ ու պատարագ՝
Մեջը դրին Մարոյին:
– Մենավոր ծառը էն ա:
Դիդն արդեն մոտ էր: Սա Թումանյանի ամենասիրած վայրն է. ««Հեյ գիդի հա… Ի՞նչ օրեր եմ անցկացրել փոքր ժամանակս էստեղ: Երեխեքով հավաքվում էինք Դլոդի դոշը՝ ուրց էինք քաղում, հասկերից պկու շինում, մեջքներիս վրա պառկում էինք ու ածում… ի՞նչ լավ էր… «»: Իր կյանքի վերջին օրերին, Մոսկվայում, ծանր հիվանդ, Թումանյանը նորից անհուն կարոտով հիշել է Դիդը. ««Շատ էի ուզում, որ Դլոդի ուսին լինեմ. էնտեղ եմ անցկացրել երեխա ժամանակիս լավ օրերը… Շատ եմ խաղացել էնտեղ, շա՛տ…«»: Թումանյանը նույնիսկ երգ ունի Դիդի մասին, որի խոսքն ու երաժշտությունը ինքը՝ մեծ բանաստեղծն է գրել: Տուն-թանգարանում Արմենուհի Թումանյանը շատ չարչարվեց, բայց մագնիտաֆոնը չաշխատեց:
– Մագնիտաֆոնը շատ է հին, չի աշխատում, ուզո՞ւմ եք ես երգեմ ձեզ համար.
Ամպ ու հովերն անո՛ւշ-անո՛ւշ, —
Անցնում օրերն անո՛ւշ-անո՛ւշ,
Անջրայի՛ն, թեթևա՛սահ
Ամպ ու հովերն անո՛ւշ-անո՛ւշ:
Թախծոտ երգեց Արմենուհին:
Չկատարվեց Թումանյանի երազանքը: Չկարողացավ վերջին անգամ տեսնել Դիդը, հրաժեշտ տալ Դիդին…
Դեռ պատանի, դեռ Զալալօղլում, նա երազում էր տեսնել Եգիպտոսը ու երբ հեռանում էր Զալալօղլուց, և ընկերները հրաժեշտի երգ էին երգում.
««Է՞ր հեռանա
Քո մայրենի աշխարհից…»»
Նա գնում էր ու ասում.
– Ես ձեզ կտանեմ Եգիպտոս…
Եգիպտոս… Նա Ղարաբաղն անգամ չկարողացավ տեսնել. Լենին խոստացել էր, իր բժիշկը ղարաբաղցի էր՝ ««մի շատ լավ, ազիզ տղա»»՝ Գրիգոր Սուղյան, նրան էլ էր խոստացել ու չկարողացավ կատարել խոստումը, չկարողացավ անգամ Ալեքսանդրապոլ մեկնել՝ ««Անուշ»» օպերայի առաջին ներկայացմանը… Ժամանակ չուներ: Մեծ հաշտարար էր, կյանքը վտանգի տակ դնելով, սպիտակ դրոշը ձեռքին, լեռներում ման էր գալիս. ««Ինչպես

պիտի ծիծաղեք, երբ ինձ տեսնեք լեռներում, պատրոնդաշները գցած, զինված ոտից գլուխ, հարյուրավոր ձիավորներով ու ճերմակ դրոշակով»»: Հետո՝ «»…ամեն ջանք շարունակ գործ եմ դրել մեր գավառներում խաղաղություն պահպանելու… Եվ այսօր ես այնքան գոհ չեմ, որ գրականության մեջ մի որևէ բան եմ արել, որքան գոհ եմ, որ ակներև կարողացա իրար դեմ կանգնած ժողովուրդների սրերը պատյան դնել տալ»»: Եվ այսպիսի մարդու՝ Սարբոնի ու Պետերբուրգի համալսարաններն ավարտած երեք որդիներին բոլշևիկները տարան սիբիրներում կորցրին:

Դժբախտ դարում էր ծնվել, ժամանակ չուներ, և գրվելիք բանաստեղծություններն ու պատմվածքները դառնում էին նամակի պարզ ու հասարակ տողեր.

««…Վիշապի նման ձգվեց Կովկասի շղթան, Արևելքում պատռվեցին մութ ամպերը, փայլատակեց մի հրաշք ու իսկույն… կրկին ամեն բան ծածկվեց մի հսկայական վարագույրով ու մշուշով… Բայց այն ինչ հրաշք էր: Այն Արևելքի ոսկե դռներն էին…«»:

««Ես չեմ մոռանա այդ րոպեն. ոտներիս տակ, ներքև, պղտոր, մռնչալով, ոլորապտույտ անցնում է պատմական Հրազդանը…

Հրազդան, գետակդ իմ հայրենի,

Հրազդան, ջրրիկդ իմ անուշիկ…»»

««Ղողանջում էին Էջմիածնի զանգերը-լայնածավալ հառաչանքի նման, ես երբեք այսքա

տխուր չեմ լսել Էջմիածնի զանգերի ձենը»»:

««Ես աշխատում էի չնայել Արաքսին ու Մասիսին: Բայց, այնուամենայնիվ, նայեցի մի անհասկանալի երկյուղով- Մասիսի գլուխն ծածկված էր ամպերի տակ.

Արաքսը ձեն չէր հանում- չէր պտտում

Ծանր ու խոր թշշում էր… «»:

Մենք բարձրանում ենք Դիդի կատարը: Երևում են Չաթինդաղի, Պապաքարի, Դվալի, Լալվարի, Քոշաքարի, Ղարախաչի լեռները, Մոտկորի անտառներն ու Լոռու ձորերը: ««Հեյ գիդի հա, մեր Լոռվա սարերը, ձորերը, անտառները… – մահվան մահիճին գամված ասել է նա, – մտքովս ինչպես գնացի հին ծանոթներիս մոտ, որ հիմի չկան, ինչպես եմ վերապրում անցած կյանքս՝ արդեն չքացած…«»: Երևի վերջին ժամերին նորից Դիդն է հիշել. ««Մարդ հիմի բարձր, շատ բարձր սարի վրա լինի»»: Մահը արդեն մոտ, շատ մոտ էր, իսկ նա երազում էր, երազում էր… ««Ախ, երանի ««Հազարան բլբուլս»» գրած լինեի, ի՞նչ լավ կլիներ»»: ««Ախ, մի վեր կենամ, ինչե՛ր կարելի է հրապարակել, ի՛նչ հնարավորություններ կան հիմա պարապելու, գրելու, բոլորը, բոլորը կա՝ առատ, լավ, իսկ ես… ես էս օրի եմ»»: ««Խանգարեցին, չթողեցին մարդ նստի, իրեն գործով կենա: Ինչ եմ գրել մինչև հիմա, մի քանի տող բան, էն էլ վռազ, ոտի վրա»»: Ու նորից՝ ««Ախ, թե մի առողջանայի, դռներս պինդ եմ փակելու, որ էլ մարդ չթողնեմ ներս, նստելու եմ ու պարապելու և լավ եմ պարապելու»»: ««Գարունքի հետ հենց աչքերս բացվեն, ինչեր եմ թափելու, հեքիաթների, լեգենդների հեղեղ…«»: ««Շատ բեդովլաթ ժառանգ դուրս եկա: Լոռին ինձ ահագին կապիտալ էր տվել, ծախսեցի, փուչ արի: Ինչպես շոայլեցի, բոլորը կորցրի…«»:

Կյանքս արի հրապարակ, ոտի կոխան ամենքի,

Խափան, խոպան ու անպտուղ, անցավ առանց արդյունքի:

Մահվանից առաջ կարոտով ասել է. ««Ես ավելի շատ մեր տունը կգնամ, մեր տունը

էնքան եմ կարոտել…«» (Հիշո՞ւմ եք «„Գիքորում“». «»…ես մեր աղբրի սառը ջրիցն եմ ուզում, դեդի… ես մեր տունն եմ գնում…«») :

Դա էլ չկատարվեց, դա էլ մնաց սրտումը: 1923 թվի մարտի 22-ին (Դսեղում արդեն գարուն էր) Մոսկվայում մի ցուրտ, մի սառնամանիք առավոտ Թումանյան

հարազատներին պատգամ արեց.

– Ղոչաղ կացեք:– Ու դեռ այնքան ջահել՝ գնաց աշխարհից.
Աղբյուրները հնչում են ու անց կենում,
Ծարավները տենչում են ու անց կենում,
Ու երջանիկ ակունքներին երազուն
Պոետները կանչում են ու անց կենում…
Հեռվում ինչ-որ տեղ մեկը երկար կանչում է: Հովիվ է երևի, ընկերոջն է կանչում:

Ես սթափվում եմ մտքերից:
– Գնանք, արդեն ուշ է, – ասում է Արմենուհին:
Արևը մոտենում է Չաթինդաղի կատարներին: Մենք բլուրն ի վար իջնում ենք դեպ գյուղ:
Երկնքում հատուկենտ աստղեր են երևում:
Հեռվում, Ծաթերից այն կողմ, լեռների վրա երևում է լուսինը՝ կիսատ հաց՝ վրա մատների հետքեր:
Հրաժեշտ ենք տալիս դսեղցիներին ու Դսեղին: Արդեն տոմս են պատվիրել մեզ համար, դանդաղ, զրուցելով իջնում ենք դեպի Թումանյան բարձունքը:
Գեղեցիկ է Լոռու ձորը՝ շրջված երկինք: Լուսինը լեռների ետևից ելել ու մնացել է կանգնած. ձորը խորն է, վախենում է ձորի վրայով անցնել, իսկ աստղերը՝ ցածր, խոշոր-խոշոր, պլշած նայում են: Ներքևում վշշում է ««տան տակի ձորի»» Դեբեդը. ««Գիշերները լռության մեջ միշտ ականջ էի դնում Դեբեդի ձայնին՝ երբեմն խուլ ու խոր, երբեմն պարզ ու ահավոր: Եվ կարծես խոսում էր հոգուս հետ…«»: Լուսնալուսնի տակ փայլփլում ու կորչում է Դեբեդը, ասես կանչում է. ««Արի, Անուշ, արի տանեմ յարիդ մոտ»»:
Վերևում բարձր, շատ բարձր, կամիր լույս արձակելով մի օդանավ անցավ, հետո մի աստղ պոկվեց, գնաց, կորավ աստղերի մեջ:
Երկնքի անհուն, հեռու խորքերի
Անմուրազ մեռած սիրահարներ
Աստղերը թրռած իրար են գալիս…
– Սա Թումանյանի բարձունքն է: Դսեղ գյուղը հիմա կոչվում է Թումանյան, հրեն Թումանյան բանավանը, Թումանյան կայարանը: 950 աշակերտի համար դպրոց ենք կառուցում, էլի Թումանյանի անունով ենք կոչելու: 21 կիլոմետր հեռավորությունից Փորթ-փորթ աղբյուրի ջուրը գյուղ ենք բերում և աղբյուրը էլի Թումանյանի անունով ենք կոչելու: Սանահինի քարափին ամբողջ հասակով մեկ կանգնեցնում ենք արձանը:– Դսեղ գյուղի կոլտնտեսության նախագահ Սարգիս Աղաբեկյանն է խոսողը:
– Այնպես որ, համատարած Թումանյան է, – ժպտում է Արմենուհին և արտասանում է Էմինի տողերը.
Երբ Թումանյանը աշխարհում չկար,
Արդյոք Լոռվա սեգ լեռները կայի՞ն…
– Չկային, – իսկույն ասում է Սարգիս Աղաբեկյանը ու շարունակում է, – Էս ձորում՝ Ձաղի ձոր ենք ասում, Թումանյանի պապոնց այգիներն են եղել, որի մասին «„Հին օրհնության“» մեջ գրել է: Լույս լիներ, կգնայինք, կնայեինք, ընկուզենիների բները մնում են դեռ: Էն ձորում էր ապրում Ղոխնանց պապը: Հիշո՞ւմ եք, «„Հառաչանքում“» գրած է: «„Հառաչանքում“» գրածը հենց ինքը՝ Ղոխնանց պապն է պատմել Թումանյանին:
Ռիման նայում է ժամացույցին: Ուշանում ենք:
– Մեր Գուգարանց աշխարհը, մեր Լոռվա ձորը բարով հիշեցեք, -ասում են Սարգիս Աղաբեկյանն ու Արմենուհին:
Նեղ կածանով իջնում ենք դեպի Քոլագերան: Մեզ ծանոթ կածանն է. մորոլվելու վախ չունենք:

Քուն էր մտել անտառը, և լուսինը բարձրից հսկում էր անտառի անուշ քունը, այնտեղ, ձորում աղմկում էր գետը՝ Դեբեդը, և միալար լռության մեջ, Դեբեդի միալար վշշոցի հետ ասես մեկը կամաց երգում էր մութ ձորում.

Հեյ, պարոններ, տեսա կանաչ գարունքի
Էս սարերում լաց էր լինում մի պախրա,
Սիրուն հորթը մոլոր կանգնած իր կողքին
Էս սարերում լաց էր լինում մի պախրա
Գընդակն առած գնում էր փուչ աշխարքից
Գանգատվելով մարդու անգութ արարքից
Արյուն տալով, մոկտալով իր վերքից
Էս սարերում լաց էր լինում մի պախրա…:

Մութ ձորում, իրոք, կարծես թե տխուր երգում էր ինչ-որ մեկը: Փամբակի լեռներում սուլեց, հետո երևաց Երևան-Թբիլիսի գնացքը: Մենք արագացրինք մեր քայլերը:

Ներքևում երևում էին արդեն Քոլագերան կայարանի լույսերը:

==========

Մ Ա Ն Ր Ա Ք Ա Ն Դ Ա Կ Ն Ե Ր

Ե Ր Բ Ե Ս Ջ Ե Մ Լ Ի Ն Ի

Նվիրում եմ քեզ

1.

Երբ ես չեմ լինի՝ արեգակն այնտեղ, սարերի վրա, մի վերջին անգամ մեղմ կհուրհրա՝ մինչև սև ամպը վարագույրի պես կիջնի՝ ծածկելու երեսը նրա:

Անտառի խորքից դալուկ, բեկբեկուն կկանչի կկուն՝ թալկացող սրտի տրոփին հանգույն, գեղ-գեղ կըերգի դեղձանիկն այնտեղ, և սաղարթախիտ ծառերն վերևի՝ բարձր երկնքում դինջ օրորվելով, ինձ գնաս բարով կասեն երևի:

Մամռոտ քարերով Ղըրմա աղբյուրը վճիտ ողողանջով մանկութ օրերիս ասքը կհյուսի և հեռու՛-հեռու՛, հեռու հուշերում իմ նետած քարից թևը արնաներկ հավքը կճչա մի վերջին անգամ ու նրան ոչ ոք դառը կսկիծով չի հիշի արդեն ինձանից հետո:

Երբ ես չեմ լինի՝ ոչինչ չի փոխվի, արևը կելնի ու մայր կմտնի, անտառից եկող հավքի դայլայլն ու լորի սաղմոսը՝ հանդարտ ալիքվող դեղձան արտերում, նույնը կլինի, հեռու քաղաքում, անմոռաց սիրո մրմունջը հոգում՝ կորստի ցավից մեկը կարկամած կարտասվի թաքուն…

Երբ ես չեմ լինի՝ ոչ ոք ինձ համար արցունք չի հեղի Նրանից բացի…

2.

Ե Ր Բ Դ ՈՒ Ջ Ե Ս Լ Ի Ն Ի

ՆՐԱ ՊԱՏԱՍԽԱՆՆ ԻՆՁ՝
ՀՂՎԱԾ ԱՐՑՈՒՆՔԻ ՄԻՋԻՑ

Երբ դու չլինես՝ իրավ, չի փոխվի, ոչինչ չի փոխվի այս մեծ աշխարհում: Արևը կցոլա ինչպես որ առաջ, նույնը կլինի գեղեցկատեսիլ այգը երևի, և վերջալույսի հուրը կշողա մուգ հորիզոնում…

Երբ դու չլինես, գետակը ձորում մունջ կխոխոջա՝ շոյելով գետի քարերը ողորկ, կեռնեխը այնտեղ՝ ձորի պոնկի թավուտ անտառում կրերգի տրտում: Ծաղիկներն էլի առաջվա նման փթթուն դաշտերում կբուրեն դյութիչ, լորը կկանչի հասած արտերում, թիթեռնիկները՝ ոսկյա թևերով, կճախրեն թեթև՝ հուշիկ նստելով նուրբ ծաղիկներին…

Միայն ինձ համար, ախ, լոկ ինձ համար աշխարհը մեկեն լուռ կհամրանա, աչքերս՝ աղի արցունքներով լի, սիրտս՝ մորմոքուն, որբացած հոգիս կողբա թաքուն…

Եվ ձեռքերը իմ՝ անզգա, անկամ, կկարկառվեն վեր.

,, Օ՛, Տեր իմ, Տեր իմ, անսա անձկալի ձայնն իմ աղոթքի, թույլ տուր այն կյանքից՝ ճերմակ ամպերից ու հեռու- հեռու երկնքից անդին, տիեզերական անհունից անծիր, վերադառնալու երկիրն այս լուսե, թույլ տուր քաղցրահունչ ձայնը Իր լսեմ, թույլ տուր, որ տեսնեմ լույսը Իր հոգու, տոչոր շուրթերով հպվեմ այդ լույսին:

Ողորմա ինձ, Տե՛ր, համակիր եղիր իմ խորունկ ցավին, ես հազար անգամ մեռնում-հառնում եմ կարոտից նրա, թույլ տուր, որ զգամ կյանքի շունչն Իր մեջ, թույլ տուր դառնալու երկիրն այս կրկին՝ որ ծնվենք մեկտեղ, միևնույն ատեն, որ աշխարհ չգա, ինչպես այս կյանքում՝ երեսուն տարի ինձանից առաջ: Օգնիր մեզ, Տեր իմ, վերստին գտնելու մեկս մյուսին, որ չբաժանվեն հոգիները մեր, ու սերը մեր սուրբ, սրտերն անապակ՝ անջատված անգութ փորձություններում, դառնան միաձույլ, մի սիրտ ու հոգի,,:

…Եվ եղավ այնպես… որ գարնան մի օր, վաղ լուսաբացի արեգակնային վճիտ շողերում, մի պահ ինձ թվաց Իր հոգու լույսը տեսա ես հանկարծ. ծաղկանց բուրմունքում ես պարզ լսեցի հրայրք շուրթերի շշունջը մեղմիվ, շնչառությունը զգացի ասես թարմ զեփյուռի մեջ…,,Նորից ինձ հետ է, ինձ հետ է կրկին,, – մրմնջացի ես խորը վշտաբեկ, դառը ժպտալով արցունքի միջից…

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱՆԿԱՐ

Արևը հանգչում է սարերի վրա, և հրաբոսոր հորիզոնն այնտեղ վառվում է ասես բազում գույներով՝ երկինք ու երկիր կապելով իրար…

Օրը հանգչում է՝ տառապանքներից, տվայտանքներից, ասված ու չասված ունայն խոսքերից լրիվ հոգնաբեկ…

Եվ հետզհետե ձորերը լռին խորասուզվում են իրիկնային լուրթ աղջամուղջի մեջ. գետակը լռում, հավքերը լռում, մոտիկ արտերում արտույտներն արդեն էլ չեն արտորում… Ձայները կամաց մարում են դրսում, և հետզհետե իջնում է մութը՝ իր սև շղարշով ներընդգրկելով ամեն մի շշուկ, ամեն մի շարժում, լոկ ծղրիդներն են երգում անձանձիր…

Սարերի վրա, բարձր երկնքի անծիր կապույտում, աստղերի բույլը՝ երկնքից հեռու, և միլիոն պարսեկ իրարից հեռու, իր անհատնում լույսերն է հղում հեռու երկրին… Աստղացող լույսը ՝ խավարում նիրհող դաշտին, գետակին, հավքին ու մարդուն, և հեռվից հեռու համր թարթումով կարծես ասելով յուրաքանչյուրին. դու մի վհատվիր, խավարից հետո գալիս է լույսը, իսկ հույսը մեռնում է ամենավերջում, շուտով, շատ շուտով կբացվի նոր օր՝ արևը, լույսը և հույսը իր հետ:

Ե Ր Բ ՈՐ Հ Ա Ն Դ Ի Պ Ե Ն Ք…

Երբ որ հանդիպենք, ու ես քեզ հեռու, հեռու իմ երազ, իմ սրտի փափագ ու հանապազորդ իմ կուռք ու մուրազ, տեսնեմ իրապես…

Երբ մենք հանդիպենք (օ, Տե՛ր իմ Աստված, ինձ պետք չէ ոչինչ՝ միայն քեզ տեսնեմ, միայն թե տեսնեմ տեսքդ գեղանի, դեմքդ՝ լուսեղեն ու հուզաթաթավ), ու երբ որ տեսնեմ աչքերդ ծավի ու սիրտն իմ թալկանա կարոտի ցավից, ու արարչական նրբին կորությամբ գծված շուրթերիդ բոսոր ես մեղմ շշնջամ մարող շշուկով՝ ի՞նչ հաճելի ես դու իմ աչքերին ու հանց բալասան՝ տառապյալ սրտիս…

Ու երբ բերկրանքից, որ մենակ ենք մենք արար աշխարհում, և ոչ ոք, ոչ ոք չի նախանձի մեզ՝ մեղմ գորովելու մեկս մյուսին, ու ինձ՝ շոյելու մանրալիք իջնող մազերդ ոսկյա, այն ժամ կըմբռնենք… որ այլ էր մինչ այդ ու այլ կլինի դրանից
հետո:

Երբ երկարատև հույսը կփոխվի լուսաջինջ լույսի, և ծիածանը, անձրևից հետո, կամար կկապի լաջվարդ երկնքում, ու նոր մենք կըզգանք սիրո հրայրքն ու թովչանքը վսեմ՝ մե՛ծ երջանկության, ու հոգիներում մեր, չքնա՛ղ իմ էակ, գարուն կծագի՝ լուսաճաճանչված արեգակնային զվարթ շողերով:
Երբ մենք հանդիպենք:
Եթե՛ հանդիպենք…

ՀԵՌՈՒ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Իմ հեռու, հեռավոր հիշողության մեջ զնգում է առուն, մեղմիվ խոխոջում՝ ողջունելով ինձ, թիթեռնիկներին, հավքերին պես- պես և ծաղիկներին՝ սյուքից օրորվող…

Ես՝ փոքրիկ տղա, ձեռքիս պարսատիկ, անհոգ ու ազատ, ընկերներիս հետ թրվռում էի ուրախ, երջանիկ. իմն էր աշխարհը՝ թիթեռնիկները, հավքերը պես-պես և ծաղիկները՝ սյուքից օրորվող…

Դու իմ մանկության սիրելի առու, որ զրնգալով, խնդուն խայտալով վազում էիր ցած՝ քեզ հետ տանելով երազներն իմ ջինջ, ու՞ր ես դու հիմա, որտե՞ղ է մարել ձայնդ երգեցիկ…

Հեռու- հեռավոր հուշերի խորքից ետ եկ, իմ առու, անանմոռանալի սիրելի ընկեր, ետ բեր օրերն իմ անհոգ ու ազատ ուրախ մանկության, ետ բեր օրերն իմ, իմ ընկերներին, թող կյանքը լցվի նրանց ձայներով, ու ես վերստին դառնամ չար տղա՝ ձեռքիս պարսատիկ, անհոգ, երջանիկ՝ մեր հեռու՛, հեռ՛, հեռու լեռներում…

ԱՆՑԱՎ

Անցա՛վ, անցա՛վ, կյանքն իմ ացավ՝ ինչպես երազ, ինչպես մուրազ, ինչպես մի հուշ անվերադարձ, ու ես ոչինչ չհասկացա, ասես կողքից եկավ անցավ:

Տրտմած է հոգիս հիմա, որ կյանքը իմ եղավ ունայն, սուտ ու կեղծին հավատընծա՝ ապրեցի ես հեզ ու խաբված: Մեռնելու չափ տրտմած է, ախ, սիրտը իմ. ի՞նչ շահեցի աշխարհ գալով՝ ոչի՞նչ – ոչինչ, միայն ցավեր, միայն դավեր, խինդը սակավ, շառն՝ անսպառ:

Գթա ինձ, Տեր, գթա ինձ, Տեր, ու ողորմիր, կյանքն իմ անցավ ինչպես երազ, ինչպես կարճ օր, ու ես, իրոք, չհասկացա, ա՛խ, ես ոչինչ չհասկացա՝ ինչպես եկավ, ինչպես անցավ:

Գթա, Տեր իմ, քանզի բազում արհավիրքներ կրեցի ես ամբողջ կյանքում: Ամբողջ կյանքում, ախ, զուր հույսեր, իզուր հույսեր, մորմոք ու ցավ, կյանքն իմ, իրավ, այդպես անցավ, չեղավ մի օր՝ լիներ անցավ:

ԵՐԱՋ

Լինե՛ր, լինե՛ր, այնպե՛ս լիներ, տարիներն իմ հետ գնային միանգամից: Միանգամից ես լինեի իմ հեռավոր երազներում՝ մեր տան դռան, հենց նոր ելած ոսկեշղարշ արևի մեջ, մեր հնամյա թթենու տակ:

Հայրս լիներ, մայրս լիներ, քույր ու եղբայր՝ բոլորը ողջ, հարազատներն իմ մեկեն գային, հավաքվեին կարոտաբաղձ ու լիներ տոն՝ ինչպես հեռու այն հին կյանքում՝ նրանց տեսքով՝ հավերժ անջինջ, նրանց ձենով՝ հավետ անմեռ, որ հնչում է տարիներ վեր՝ իմ ականջում, իմ հոգու մեջ ու իմ սրտում:

Լինե՛ր, լինե՛ր, այնպ՛ս լիներ՝ նորեն մեկտեղ, ախ, լինեինք, ես՝ երջանիկ, ես բարեբախտ, ցավ ու դավին դեռ անընտել մի պատանի՝ հրդեհի մեծ ցոլքի նման հրաբոսոր արևի ջերմ շողերի մեջ, թռչունների հայալեզու երգի ներքո, հեռո՛ւ – հեռո՛ւ, մեր հնամյա թթենու տակ:

ՊԱՏՐԱՆՔ

Հե՜յ, Կըղնախաչ, իմ Կըղնախաչ, հիշողության մրուրի մեջ դու մոռացված իմ հեռավոր, կախարդական դրախտ երկիր, Կըղնախաչ…

Կըղնախաչում՝ շնկշնկան հով, զիլզիլան զով, սարից իջնող, ձորից ելնող բացատներում ծաղկած հրաշք ու ծաղկած ծով՝ իր գույներով հազարագույն… Կըղնախաչում ՝ արտույտի երգ ու գեղգեղանք, խոտի շրշյուն, սիրո շշունջ՝ արտերի մեջ սիրաշշուկ, հավքի դայլայլ, անուշ դայլայլ, քաղցր դայլայլ ու կկվի կանչ ՝քաղցրալուր ու թախծագորով…

Քարեն կըլխան՝ աղեղնաձև ու բարձրաբերձ վեհ բարձունքից՝ մղեղի մեջ երերացող հին շինամաչ… Դաշտում կապած ձիու խրխինջ, գառան մայուն ու ձագ տված մեղվի գվվոց, աքլորի կանչ, աղջկական արծաթահունչ զնգուն ծիծաղ կակաչազարդ արտի միջից, ախորժալուր զանգի ղողանջ ու շնահաչ գյուղամիջից՝ մեկ կատաղի, մեկ բեկբեկուն…

Թեթև անձրև, մանր անձրև՝ հանդ ու սարեր ոսկեշղարշ աղջամուղջում, միգամած… Արեգակի ջինջ շողերում ՝ տաքուկ անձրև, ու սարից- սար կամար կապած կընընչկարմյուր ծիածան… Ու այդ պահին, հովի թևին, օ՜վ, իմ աստված, մորս ձայնը, մեռած մորս անուշ ձայնը, կանչում է ինձ՝ արի, որդիս, արի տուն, հեռուներից վերադարձիր ու տեր կանգնիր գերեզմանին իմ անտեր…

…Հե՜յ, Կըղնախաչ, իմ Կըղնախաչ, հիշողության մշուշի մեջ դու կորսված իմ մանկության չքնաղ երկիր, Կըղնախաչ..

ՎԵՐՀՈՒՇ

Կըղնախաչ սարի ուսերին թառած աստղերի խաղը, նրանց շողշողուն լուռ մնջախաղը, վաղ լուսաբացի մեղմ շամանդաղը, մեր գյուղի շուրջը՝ դաշտերի եզրին նստած թարմ շաղը,

արտերն ալիքվող՝ վաղորդյան սյուքից, վարդերը բուրյան, ձորերում հնչող հավքի դայլայլը, նրա կանչն անձկալի, նրա մեղեդին ու սիրախաղը այսօր վերստին իմ միտը ընկան…

Չքնաղ երկիրն իմ, իմ Ղարաբաղը, լեռներից անդին՝ էն հեռո՛ւ-հեռու արևի խաղը, ցոլքը արևի՝ բարձրաբոց խարույկ, գետի խոխոջն ու ցայգալույսի մեջ տների վրա՝ էն շողը շենշող, արտույտի անուշ արտորումն արտում, խրխինջը ձիու, ամառվա տապում՝ մեղվի գվվոցն ու սոխակի տաղը՝ հոգիս այրելով մի ուրիշ աշխարհ այսօր ինձ տարան…

Գյուղն իմ հայրենի, տունն իմ հայրական, մեր ավեր բաղը, կալերն ամայի, անտերուչ, լքյալ մորս շիրիմը՝ իմ սրտի դաղը, մարդկանց ձայները՝ թաղից այն թաղը, մեր աղջիկների զնգուն ծիծաղը՝ աղբյուրի մոտից, մանկութ օրերի մեր անհոգ խաղը՝ դավին անսովոր, ցավին անընտել, այսօր վերստին իմ միտը ընկան…

ԲԱՔՈՒ

Прощай Баку! Тебя я не увижу,

Теперь в душе печаль, теперь в душе испуг…

С. Есенин

Մնաս բարով Բաքու՛, Բաքու՛, հեքիաթայի՛ն, անրջայի՛ն, շքեղաշուք տեսքը քո, արդյոք, կտեսնե՞նք էլի… Երկնայի՛ն դու դրախտ, Բաքու՛, Բաքու՛, վշտալից որդիներդ տարաբախտ, հեռանում են քեզանից:

Հեռանում ենք մենք տրտում՝ մեռածներին մեր թողած, նրանց ոգին մեր հոգում հավիտյանս անթեղած: Լացակումած հեռանում, հեռանում ենք քաղաքից, թուրքի ոհմակն է ոռնում լաստանավի քամակից:

Բաքու՛, Բաքու՛, հեքիաթայի՛ն, անրջակա՛ն, դու մեզ անհա՛ս, դու մեզ համար անմատչելի, այսուհետև սոսկ հուշերում, լոկ հուշերում կարող ենք գալ մենք քեզ այցի, Բաքու՛, Բաքու՛, սիրու՛ն քաղաք, սիրո՛ քաղաք՝ կախարդակա՛ն, երազայի՛ն, անզուգակա՛ն:

Օրորվում է ծովը լուռ, հրաժեշտի ծփանքով, խոր վշտի մեջ մենք անլուր ետ ենք շրջվում արցունքով: Ետ ենք շրջվում՝ քեզ, Բաքու, մի անգամ էլ նայելու, չէ՞ որ գիտենք՝ տեսքը քո, ավա՛ղ, էլ չենք տեսնելու…

1990թ. հունվար

ԵՍ ԵՎ Ն Ա

Փողոցով անցնում էր զառամյալ մի մարդ: Հազիվ էր շարժվում՝ ոտքը դանդաղուն, ծանր փոխելով: Մի պահ մտախոհ նայեցի հեռվից ու սարսափ պատեց ինձ միանգամից…Ես մտածեցի. չէ՞ որ կգա և գարունն իմ վերջին և այնտեղ, ուր որ հուրհրատում էր կրակը վառման իմ ջահելության՝ մոխիր կլինի լոկ, ախ, մոխիր միայն…

Տարիներ անցան, ժամանակ անցավ, ես, աստվածածին իր գեղեկցությամբ ու աշխարհի ողջ բարությունն իր մեջ ամփոփած, որդի կորցրի, մեն մի օրվա մեջ լրիվ ճերմակած՝ չհասկացա էլ, թե ոնց ծերացա…Լուռ քայլում էի ծերունական իմ գայթուն քայլերով, զգացի

մեկի հայացքը վրաս ու ետ շրջվեցի. ջահել մի տղա՝ սիրուն պատանյակ, մտախոհ կանգնած, նայում էր հեռվից…

ՄԱՅՐ ԻՄ

Մա՛յր իմ, մայր իմ սիրասուն, սրտիս կոտրած հենապյուն, խոտ ու ծաղկի մեջ կորած՝ վրադ անգամ քար չկա: Գուցե հառնե՛լ ես նորից, նորից ելել ես հողից՝ որպես մի խոտ, մի ծաղիկ, որպես կակաչ հրավառ՝ տեսքով կարմիր, սիրտը սև, օրորվում ես քամու հետ, լաց ես լինում ինձ համար:

Մա՛յր իմ, մայր իմ աննման, դու ամբարված բարություն, չկա արար աշխարհում ուրիշ ոչ ոք քեզ նման: Մա՛յր իմ, մայր իմ դու անգին, դու մեծագու՛յն սրբություն, քո կարոտից գիշեր – զօր մղկտում է իմ հոգին:

Ների՛ր, ներիր բոլորին. զավակներիդ, թոռներիդ, աստվածածին քո հոգով, քո մեծ սրտով տառապյալ, բոլորին էլ դու ներիր. չկար մեկը մեզանից՝ բոներ ձեռքդ սրբասուրբ, մի կում ջուր տար, մի քիչ հույս, մոտդ նստեր մինչև լույս, մի խոսք ասեր սրտահույզ, մենակության մեջ լքյալ (գուցե ծարավ ու սովյալ), կյանքդ տրտում բոլորեց՝ աչքդ ճամփին բոլորիս:

Ի թողություն մեղա՛ց. մեղքի տակից ո՞նց դուրս գանք, չկա մեզ ապաշխարանք. մեղսակից ենք հար – հավետ, քանի ապրում ենք ու կանք:

ՊԱՏՎԻՐԱՆ

Ես մեռել էի: Ինձ թաղել էին, կամ այրել էին. դա չէ կարևոր- ես հառնել էի: Ես հառնել էի ուրիշ աշխարհում. ընկերները իմ չկային արդեն, ովքեր էլ կային՝ ծերացել էին. ինձ մտաբերել չկարողացան:

Մայրս… մայրս անպայման ինձ կճանաչեր, արցունքն աչքերին կրծքին կսեղմեր, բայց… մայրս չկար: Նա հող էր դարձել, և որպես ծաղիկ, որպես մի կակաչ՝ ինքը ալ կարմիր, սակայն, սիրտը սև, լուռ օրորվում էր մեղմիվ հովի հետ. նա լաց էր լինում իր որդու համար:

Ես հառնել էի, բայց մեկը չկար ինձ դիմավորեր… Ու նորից մեռա, որ դառնամ կակաչ, կամ մի այլ ծաղիկ՝ ամեն լուսայգի ողջունեմ մարդոց յուրաքանչյուրին, ասեմ, որ ես էլ այնպիսին էի, ինչպես դու հիմա, դու էլ կդառնաս ճիշտը այնպիսին, ինչպես ես հիմա. սերն է ի սկզբանե, սերն՝ հարափոփոխ, սերն՝ հրաթրթիռ ու լուսափթիթ, դրանից վսեմ լուսեղեն հեքիաթ աշխարհում չկա, սիրիր, քանի կաս, սիրիր մշտատև, քանի ապրում ես այս արևի տակ, կյանք չկա առանց ըղձալի սիրո հրավառության. սա է պատգամը ունա՛յն, ախ, ունայն, այս ունա՛ յն կյանքի…

ԱՅՍ ԳԻՇԵՐ

Սիրո խոսքեր մի» ասա այս գիշեր:

Եկ այս գիշեր չխոսենք, սիրո մասին չխոսենք: Չխնկարկենք խոսքեր սին, ես կլռեմ, չեմ խոսի, ու դու ևս մի խոսիր՝ սիրո մասին այս գիշեր:

Աստվածային դու պարգև, վսեմաշուք ինձ շնորհ՝ թավշե ձայնով հոգեթով, ժպիտն ալվան շուրթերիդ, քո նայվածքով շեղակի, քո քայլվածքով հմայուն, քո պահվածքով եզակի, քո

կազմվածքով նրբագեղ, պարանոցով մարմարյա՝ նեֆերտիտյան համարյա – խելքահան ես արել ինձ:

Ասա, ինչպես, ախ, ինչպես ես խենթորեն չսիրեմ աչքերը քո սևորակ, շուրթերը քո մեղրահյուս, մատները քո նրբատաշ, հասակը քո նրբատեսք՝ բարակիրան, սլացիկ՝ ինչպես բարդի մի մատղաշ: Ախր, ինչպես, ախ, ինչպես չկորցնեմ ինքս ինձ՝ տարված քեզնով, քո սիրով…

Սիրո խոսքեր մի ասա, խոսքերը կայրվեն կրակում, մի ասառչինչ այս գիշեր… Այս գիշեր խաճողիր մազերս, թող մատներդ սահեն իմ դեմքով, ձեռքերդ թող գրկեն ինձ ողջ գիշեր: Այս գիշեր համբուրիր ինձ սիրաբաղձ, գուրգուրիր դու ինձայս գիշեր քո կրքով: Այս գիշեր մինչև լույս ինձ պահիր գրկիդ մեջ, գրկիդ մեջ՝ այդքան ջե՛րմ, քաղցրանուշ:

ԷԼԵԳԻԱ

Ես ապրում եմ անցյալի մեջ… Ներկա կյանքում ես տե՛ղ չունեմ, ոչինչ չունեմ՝ ոչ ներկայում, ոչ գալիքում. լոկ վաղեմի հուշն է պահում ինձ այս կյանքում:

Ամեն ինչի հուշը անցած՝ լուսափթիթ վառ մանկության, պատանության արևը ջինջ ու հրավառ, հուշն իմ սիրո՝ հին օրերի շղարշի մեջ՝ անմեկնելի, անմատչելի, ձգում է ինձ, կանչում է ինձ հեռուներից անարձագանք:

Նա վերստին հառնում է իմ հուշերի մեջ, սերն իմ անմար, լույսի նման փայլ է տալիս տարիների հեռու հեռվում՝ հրացայտ սև ու ծիծաղկուն իր աչքերով ու իր տեսքով լուսաժպիտ՝ կախարդելով հոգեհմա: Այդ հուշերում երկուսով ենք, դրախտի պես մի տնակում՝ այգու ծայրին, ուր զրնգուն գալարվում է գետը ձորում, շուրջը՝ անտառ հնամենի, առվի խոխոջ, վարդի բուրմունք, արտույտի երգ՝ այգուց անդին, ձույլ հասկերով մեղմ ալիքվող արտերի մեջ, կարկաչ ծիծաղ, գիրգ շուրթերի կրքոտ հպում… Ո՛վ, իմ Աստված, եղե՞ լ է դա, թե երա՞ զ է, մտապատրա՞ նք՝ ծնված այրող իմ կարոտից:

Ես ապրում եմ անցյալի մեջ… Ներկա կյանքում ես տեղ չունեմ. լոկ վաղեմի հուշն է պահում ինձ այս կյանքում:

ԱՆՐՋԱՆՔ

Լիալուսնի կաթնալույսում սարից իջնող մտամոլոր ու քարքարոտ մի նեղ ճամփա, մի սայլ՝ բեռնված զմրուխտ խոտով՝ երնջակի, յուղածաղկի, ուրցի հոտով, ծաղկաբուրմունք խոտին պառկած փոքրիկ տղա, որի հոգին պարուրվել է երազական քաղցր թմրով:

Ոլոր – մոլոր մի նեղ ճամփա, հոր ոտնաձայն՝ քիչ առջևում, շուրջը անդորր ու մարմանդ հով, այս ու այնտեղ ցրքուն հանդեր ու անտառներ՝ հնադարյան, լիալուսին՝ սարի ուսին, չարագուշակ բվի կռինչ, առվի շշունջ, անծայրածիր, լուսաշողշող երկինքն ի վար կաթող աստղեր, ծղրիդի երգ՝ աստղահնչուն գիշերվա մեջ, ու երազներ, նիրվանային երանելի ջինջ երազներ՝ իր ջինջ հոգում:

Ոլոր – մոլոր, մտամոլոր ու քարքարոտ ճամփի վրա ծույլ նազանքով օրորում է սայլը նրան… Անրջային թմբիրը հին պարուրել է, ախ, իմ հոգին ու չգիտեմ, ախ, չգիտեմ, մեռնում եմ ես, թե երազում…

ՉԳԻՏԵՄ, ՉԳԻՏԵՄ…

Կռիվ ու վեճ է իմ մեջ. շարունակ, անդադար, անընդմեջ, իսկ ես՝ արարած մի խեղճ, չգիտեմ ում լսեմ և ում հավատամ- չգիտեմ, չգիտեմ, չգիտեմ՝ որին կանգնեմ պաշտպան, որին գնամ ընդդեմ…

Բանականությունն իմ հանդիմանում է. մոռացիր դու նրան, որ ամեն ինչ անցած է արդեն, որ էլ վերադարձ չկա, ուրիշի կին է նա, քեզ համար՝ չկա, հասկացիր, չկա ու չի լինելու, իսկ սիրտն իմ՝ նա կա, քո մեջ է նա միշտ, անցյալն է քո նա, անցյալը՝ նրա սիրով անշեջ, ապրում է քո մեջ ու կապրի ընդմիշտ, քանի դու կաս, շնչում, ապրում ես այս բորբ արևի տակ…

Մոռացիր, մոռացիր, մոռացիր դու նրան: Ի՞նչ հեշտ է ասել՝ մոռացիր, մոռացիր ամեն ինչ. աչքերի փայլը, հայացքը նրա, ձայնն ու ժպիտը, շունչը նրա ջերմ, հառաչանքը թույլ, քնքշանքը նրա, գիրգ շրթունքների հպումը այրող, մատների դողը իմ մերակներին, նրա մոլուցքը՝ քնքուշ, անհագուրդ ու սիրահարույց…

Ի՞նչ ասեմ, ես ի՞նչ, բանականությանը ես իմ անգիջում և իմ հեգ սրտին, ի՞նչ ասեմ ես, ի՞նչ, ես՝ խեղճ արարած, անպաշտպան գերի՝ գիշեր ու զօր նրանց վեճին ունկնդիր…

ԿԱՐՈՏ

Հանդիպումը նախանշան երևի՝ սահմանված էր վերևից, որ ես քեզ հետ, ու դու ինձ հետ՝ պիտի անցներ դրախտային մեր ուղին:

Որ կյանքը իմ ես քեզ տայի անմնացորդ, որ ապրեիր միայն ինձնով, որ շնչեի միայն քեզնով, որ նայեի աչքերիդ մեջ ծիծաղավառ, որ հալվեի քո հայացքից հոգեհմա, ձայնդ անուշ միշտ լսեի հանց մեղեդի, քո շուրթերի բույրն ըմպելով՝ խենթանայի, քեզ նայելով՝ նախանձեի… նախանձեի ես իմ բախտին:

Սակայն չեղավ, ավաղ, չեղավ, այդպես չեղավ, անեղծ սիրով մենք անբաժան՝ մենք միասին երբեք չեղանք, կյանքը՝ դաժան, մեզ իրարից արեց բաժան ու մեզ նետեց տարբեր ափեր, տարբեր ափեր մենք նույն գետի՝ անցանք ճամփան մեր անխոտոր՝ երազելով մեկս – մեկին, հեռվից – հեռու լուռ տենչալով մենք իրարու:

Ինչ է մնում ինձ անելու՝ ոչինչ – ոչինչ: Կորցնելով, ախ, ես նրան, էլ կորցնելու ոչինչ չունեմ: Մի հույս է լոկ ինձ փայփայում, որ երբևէ կհանդիպենք… եթե ոչ այս, այլ՝ մեկ ուրիշ, մեկ այլ կյանքում՝ ոսկեշողարշ արևից վեր, լույս երկնքում…

ՀՐԱԺԵՇՏ

Մի հիշիր դու, ասում են ինձ, գեղատեսիլ վայրերը քո վառ մանկության. ոչ վայրերն են, ասում են ինձ, առաջվա պես գեղատեսիլ և ոչ էլ դու՝ այն պատանին:

Քո վաղանցուկ կյանքից ոչինչ մի հիշիր դու, ասում են ինձ, ինչ թողել ես այնտեղ վաղուց, միևնույնն է, էլ չես գտնի, հայրենական սար ու ձորեր, հանդեր ու ուրթ՝ մշուշի մեջ, աղբյուրների խոխոջը մեղմ ու երգեցիկ, հովը գարնան ու նրբագեղ գեղեցկուհուն քո վարդաշուրթ, մի հիշիր դու, ասում են ինձ, մնաս բարով, ասա, արդեն դու ամենքին, ծառ ու ծաղկին, երգող հավքին, լորի կանչին՝ կակաչազարդ արտից անծիր, ուղիդ անցիր ճամփորդի պես՝ առանց լացի, ու դիմացի՛ր, ու դիմացի՛ր՝ որ գեղաչյա ու վարդաշուրթ գեղեցկուհուդ, քեզնից հետո, մեկ ուրիշն է տիրանալու:

Դառն ու անգութ, սին ու նանիր այս աշխարհի կարգն է այդպես, ասում են ինձ, գնա՛ս բարով, քո արևը՝ մնացողաց, որ շողշողա նրանց վերև՝ քանի դեռ կան սիրո, լույսի, հույսի ներքո, ու չի եկել ժամը նրանց հրաժեշտի…

ՊԱՏԱՆԵԿԱՆ

Այսքան սիրու՛ն, սքանչելի, գայթակղիչ ու կախարդիչ, չքնաղագեղ ու լուսազարդ, վեհասքա՛նչ ու գեղանի՝ չեմ տեսել ես՝ և ոչ մեկին ու ոչ մի տեղ…

Հանց երազի կապույտ թռչուն՝ քո ծիծաղով կարկաչահունչ, այսքա՛ն սիրուն, վեհատեսիլ, անմատչելի ու նրբիրան ինչպես բարդի՝ կանգնած ես դու միշտ իմ ճամփին:

Այն օրվանից, ինչ քեզ տեսա և այն պահից, երբ սիգանքով նայեցիր ինձ՝ հրացոլ խաժ քո աչքերով, սիրտս դողաց միանգամից, միանգամից կյանքս փոխվեց:

Քաղցրահունչ անուշ ձայնով ու կազմվածքով գեղեցկուհու, քո մատներով՝ հանց սրբատաշ, պարանոցով՝ այնքան ողորկ՝ հանց մարմարյա, քո քայլվածքով՝ սիգաճեմ ու հեզաճկուն, գիրգ շուրթերի արփիաշող ժպիտներով՝ չնաշխարհիկ, ու դնչիկով՝ հրապուրիչ ու էրոտիկ – խելահան ես արել դու ինձ:

Դու իմ կյանքն ես՝ Սուլամիթն իմ, Կիթերուհին, մեր սարերի թեթևասույր եղնիկը իմ, ասա դու ինձ, ի՛նչ անեմ ես, որ հասկանաս դու իմ հոգին: Հո չե՞ս ուզում՝ սիրուց գերված, ես խենթանամ և ամենուր և ամեն օր, գիշեր ու զօր, նաև պատեհ ու անպատեհ, արցունքն աչքիս անունդ տամ, ճամփադ պահեմ:

Ո՛վ իմ Աստված, այսքան սիրու՛ն, վեհատեսի՛լ, անմատչելի ու նրբիրան ինչպես բարդի՝ սքանչե՛լի, լուսաճաճա՛նչ ու կախարդի՛չ, չքնաղագե՛ղ, չնաշխարհի՛կ, վեհասքանչ ու լուսագե՛ղ՝ չէ, չեմ տեսել ես՝ և ոչ մեկին ու ոչ մի տեղ…

ԳԹԱ ԻՆՁ, ՏԵՐ

Այս էլ քանի՛, քա՛նի անգամ երազներում տեսնում եմ ես գեղեցկատեսք իմ լույս որդուն… Ասես խռով ամեն ինչից ու ամենքից՝ բարեկամից, չարեկամից, լույս աշխարհից ու աշխարհի նենգ ու դավից, բազմատանջ ու նահատակի իր սուրբ տեսքով Քրիստոսի՝ որդիս հանկարծ հառնում է ինձ մշուշներից, հեռվից – հեռու լռին ու հեգ նայում է ինձ անմեղսունակ թույլ ժպիտով…

Ես հուսահատ ու շընչահատ, հույլ ու անկամ, ամեն անգամ աղերսելով, մրդկրտալով ետ եմ կանչում, իսկ նա ասես չի լսում ինձ, չի ճանաչում, հեռանում է՝ հետ նայելով, ու վերստին միաձուլվում լազուր երկնի լուսաշղարշ մշուշներին… Ողբ ու կական Ռամայի մեջ, Ռաքելը իր որդկանց վրա լաց էր լինում, չէր կարենում մրխիթարվել, որովհետև… չրկա՛ն նրանք:

Տե՛ր իմ, Աստված, եթե դու կաս, իրավ դու կաս ու զորեղ ես, ամենազոր, հրզորազոր, ասա, ինչո՞ւ չես կամենում այս աշխարհից վերացրնել վիշտ ու մորմոք: Եթե դու կաս, իրավ դու կաս ու զորեղ ես, ամենազոր, հրզորազոր, ինչո՞ւ, ասա, չես արել դա մինչև հիմա ու չես անում նաև հիմա… Գոնե գրթա՛, գրթա ինձ, Տեր, մեղմի՛ր ցավը իմ անանցիկ. զրկիր մտքից, հուշ ու սրտից, գուցե թե իմ սիրտ կեղեքող ու հոգետանջ այս կրակին ես դիմանալ կարողանամ…

ՌԵՔՎԻԵՄ

Արևը լուսաջինջ երկնքից իջնում է դեպի մայրամուտ, հրացոլք խարույկը նրա վառվում է լեռների վրա: Կորցնելու ցավը անաղոք այրում է իմ վշտոտ հոգին, քանզի չապրած օրերիս

ամեն թարթ հուշում է, որ ուշ է. քո առջև զվարթուն գարուններ, իմ առջև՝ անթափանց մշուշ է. ողջ կյանքս կանգնած քո ճամփին, գտել եմ, բայց արդեն ուշ է:

Շիկնահար այտերով գեղուհիս, դեմքը քո դարձրու իմ ցավին, տես, արևս գնում է մարելու, ուր որ է կիջնի երեկոն. չարի կամոք էր՝ վերևից, կամ բախտի քմայքով երևի, որ չգտա ես քեզ ցերեկով:

Թարմ վարդի դեռատի իմ կոկոն, ժպտա ինձ սիրառատ աչքերով, մեղրացող շուրթերով ժպտա ինձ, որպեսզի փառք տամ Աստծուն, որ պահն այս տրվեց հանց պարգև՝ սիրո վայելքը զգալու:

ՂԱՐԱԲԱՂ

Մռավա սարի թուխ ամպերով, Քիրսա սարով՝ միշտ ձյունածածկ, մատուռներով՝ հին դարերից, մեր խաչերով, խենթ ու խելառ մեր Թարթառով ու Խաչենով՝ մեզ հետ ես դու՝ ուր էլ լինենք, ուր էլ գնանք, հեռու թե մոտ՝ ուր էլ մնանք, մեզ հետ ես դու, մշտաբողբոջ մեր այգեստան, մեր բուրաստան, հավերժի հետ ընկերակից մեր լեռնաստան:

Զրերդ զով ու քչքչան հովդ անուշ ու շնկշնկան, արոտներդ ալպիական՝ լորի կանչով կախարդական, անտառներդ հեքիաթային՝ կկվի ձենով ու կուսական, խոնջ հանդերդ, սար ու ձորդ աստվածային՝ չքնաղագեղ ու դյութական: Արար աշխարհ գնա ման եկ՝ Աստված վկա, ուրիշ նման դրախտ չկա:

Ո՞վ չգիտի, որ դու մերն ես, դու մի արև՝ մեր բոլորիս գլխավերև՝ մինչև մահ ու մահից հետո: Բիրթ կապանքից դու ազատված՝ ընդմիշտ մերն ես, մենք կմեռնենք՝ չենք տա բայց քեզ, մենք մի գետ ենք, դու մեր հունն ես, դու մեր հույսն ես, արյան կանչն ու աչքի լույսն ես, դու համակ կյանք՝ մեր հավատն ու սրտի սյունն ես, մենք սերմացու մի ժողովուրդ՝ դու մեր բունն ես, մեր քաջ նախնյաց սուրբ անունով լուսավորված հավերժական դու մեր տունն ես:

ՕՐՈՐ, ՕՐՈՐ…

Օրո՛ր, օրո՛ր, իմ օրերին օրո՛ր, իմ օրերին բոլոր՝ օրո՛ր, օրո՛ր… Քու՛ն մտիր, սիրտ իմ, քու՛ն մտիր, կոտրա՛ծ թևերով թռչնակ իմ, քու՛ն մտիր խաղաղ, մեր սին հույսերին օրոր, անուրջներին օրոր, օրո՛ր, օրո՛ր:

Հեռու՛ է երկիրն իմ՝ շքեղաշուք դրախտ, ու սիրտն իմ տենչաբաղձ՝ ճամփին է մշտատև, սակայն չի՛ հասնում, չի՛ հասնում նա տեղ, քանզի հուսաբեկ եմ, ավա՛ղ, ու թևահատ:

Իմ ոտնահետքերին կարոտ արահետնե՛ր կան այնտեղ՝ թավ խոտերում կորած, գեփյուռականչ ծաղիկներն այնտեղ, հավքի երգով տարված, օրորվում են մեղմիվ, շնկշնկում է սարերն ի վար դալարամեջք քամին, մանկութ աղբյուրներն այնտեղ կարկաչում, կանչում են անձկագին, մթնաշաղն է նստում արծաթաշաղ մշուշում, առաջին սերն է կանչում իմ և նրբանուրբ անունը իր շղարշվում է շնչիս ու այրում է հոգիս, ու ես այնպե՛ս եմ ուզում սիրել նրան նորեն, վերստին շշնջալ սիրաշշուկ խոսքեր, սիրո նազուն խոսքեր՝ ծնված միայն սիրո համար:

Օրո՛ր, օրո՛ր, իմ հուսախաբ սրտին օրոր, երազներին իմ օրոր, երնեկ արևն էլ իմ մարեր այնտեղ՝ հեռո՛ւ, հեռու՛, հեռու՛ սեգ լեռներում իմ հեռու, ուր գերեզմանն է իմ մոր՝ լքյալ ու անտերունչ, և գերեզմանին նրա սուրբ՝ շունչն է թևածում Աստծո:

Օրո՜ր, օրո՜ր, լույս ընկերներին իմ օրօր և բարեկամներին իմ բոլոր՝ անծիր համացանցի: Ողորմած է Աստված ու ողորմենք մենք էլ չար սրտերին մեղսոտ՝ և նենգ, և դաժան, անկարեկիր, անգութ, որ հագուրդ չունեն բնավ՝ մի թիզ հողից բացի:

Օրո՜ր, օրո՜ր, օրերին իմ անցած, որ երազի չափ կարչ՝ հեռացող զնգոցո՜վ եկան ու անցան, ու էլ չե՜ն դառնալու, էլ չե՜ն դառնալու ետ… Օրո՜ր, օրո՜ր, կսկիծներին իմ օրոր, իմ ցավերին օրոր ու օրերին գալիք՝ որ կբացվեն հետո, բայց ո՜չ մեզ համար…

ԱՐՑԱԽ

Հայաստանը մաքուր ոսկուց մի մատանի՝ ակն ես նրա շողշողենի հանց ադամանդ: Աստվածանիստ դրախտ ես դու երկնային, քո կարոտից հեռուներում՝ ներսից այրվող դեզի նման այրվում ենք մենք լուռ ու մարմանդ:

Ինչքան էլ որ հեռու լինենք մենք քեզանից, մեր օրրան, ուր էլ լինենք հարափոփոխ մեր այս կյանքում, կապրես մեր մեջ դու հանապազ, միշտ անպակաս դու մեզանից՝ մեր հուշերում, մեր սրտերում ու մեր հոգում:

Հայրենի հող, անուշաբույր դու մեր ոստան, մեր այգեստան՝ հար ըղձալի, փոքր ես դու, բայց մոր փոքրին ով է նայում. քարտեզին, տես, չկաս անգամ, չես երևում, որ համբուրենք, բույրդ զգանք, համդ զգանք, հեռվից-հեռու մեր կարոտը գոնե առնենք:

Ախր, մենք ո՜նց, ոնց մոռանանք ապառաժոտ լեռները մեր, սարը Մռավ՝ երկնի մովում, աղբյուրների ջուրը վճիտ, ականակիտ, ո՜նց մոռանանք, լորի կանչը՝ ծաղկափթիթ մեր հանդերում, ասա դու մեզ, ո՜նց մոռանանք, էդ կարոտին ո՜նց դիմանանք:

Երնեկ կրկին մենք տուն դառնանք հեռուներից ու էլ չապրենք օտար հողում մենք անտեղի, մեր հավքերի քաղցրալեզու երգը լսենք մեր ձորերում, վերադառնանք նորից մեր տուն, վերադառնանք, մեր տուն դառնանք ու վերստին տեր կանգնենք մենք մեր ծնողաց գերեզմանին, մեր տուն-տեղին…

ՄԱՅՐԱՄՈՒՏ

Մութը անցավ, լույսը բացվեց, արևն ահա դուրս է եկել, ցո՜լք է տալիս, շափաղում: Լեռներից վեր, ոսկեվորված արևից բորբ՝ ճերմակ մի ամպ լող է տալիս լուրթ երկնքում՝ դանդաղասա՜հ ու հուշիկ:

Օրը բացվեց լուսապայծա՜ռ, գնաց դեպի մայրամուտ, ճերմակաթև ամպը մեկեն գունափոխվեց, սևացավ: Մարդու բախտը հանց ճերմակ ամպ, կյանքը նրա՝ օրվա ճամփա՝ լուսաբացին արևացող, իրիկնադեմ մեկ էլ տեսար սևացավ:

Ո՜վ արարիչ, դու արարիչ ամեն ինչի, ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ, ասա, մեզ տվեցիր այսքան կարճ կյանք, որ հանապազ մնանք կարոտ ամեն ինչի… Ինչո՞ւ, ինչո՞ւ տվածը քո, որպես պարգև շռայլորեն՝ լուսաթրթիռ ջահելություն, գեղեցկություն լուսափթիթ, աչքերի լույս, հավատ ու հույս, սեր ու խնդում, հետզհետե ետ ես առնում անգթորեն՝ մեզ թողնելով դավն ընկերոջ, որին սատար էինք կանգնել դժվար օրին, չար նախանձից բարեկամի՝ լուռ այրվելիս, ցա՜վը սիրո արփիաշող, որ ուրացած երդումներն իր սին ու պատիր, գնաց նվաստ թշնամու հետ:

Օրը անցավ, մայրամուտի արևը մեր՝ հորիզոնի ցոլքերի մեջ հլրդեհվելով ոսկեձույլ ու հարահավերժ անրջանքով, դանդաղորեն անց է կենում լեռան ետև. մնացողաց՝ մնա՛ք բարով, գնացողաց՝ լույս ու արև…

ՄԻԱՅՆ ԹԵ ԴՈՒ ՄԻ ՎՀԱՏՎԻՐ

Իմ հուշերում՝ մշուշներից ձյուն է տեղում, նոճիների ծովափնյա գբոսայգու մութ ծառուղում փաթի՛լ- փաթի՛լ ձյուն է տեղում, աստղաթև ու մեղմօրոր ձյուն է մաղում գեղատեսիլ իմ գեղուհու սաթ մազերին, թարթիչներին, վարդայտերին, կիսաթափանց մեղմ թարմությամբ՝ բոսորահուր շուրթիկներին…

Նեոնային լույսերի մեջ՝ թեթև – թեթև ձյուն է մաղում, ձյան լայնշի փաթիլները՝ հարյուր հազար, միլիոնավոր ճերմակաթև թիթեռնիկներ, օդում ճախրում, գալարվում են, ալարելով՝ իջնում են ցած դանդաղորեն:

Իմ սևաչյա գեղեցկուհին՝ հուզաթաթավ ու դեռատի մատղաշ բարդի, իմ գրկի մեջ՝ հեշտանքավառ ու խաղացկուն, գլուխը իր թեթևակի ետ է գցել ու քըմահաճ, հանց աղջնակ, հրճվալից ծիծաղում է՝ լեզվի ծայրով ժիր որսալով ձյան ճերմակ փաթիլներն այդ… Նրա տեսքից՝ լուսաճաճանչ ու լուսագեղ, ոսկեհնչյուն ստապատիր իր խոսքերից՝ խայտանքի ու լացի միջից. «Ես դա կանեմ, կանեմ ես դա, դու կտեսնես, ես կգնամ ու էլ չեմ գա, թե որ այդպես դու ուզենաս», սիրտն իմ խայտում, խլրտում է, հոգիս ցնծում, թփրտում է, ու ես անկամ, ինքնամոռաց մրմնջում եմ. «Ցա՛վդ տանեմ, ցա՛վդ տանեմ, ցա՛վդ տանեմ»:

…Հետո եղավ, այնպես եղավ, երկինքը լուրթ պատեց սևով, մարդը կրկին դառավ գազան ու ամեն տեղ ու ամենուր՝ ավար, ավեր, փողոցներում ու տներում՝ մորթված հայեր, խոշտանգված ու սվինահար անմեղ հայեր, աշխարհի կույր աչքի դիմաց՝ խարույկներում վառվող հայեր, մարդը, իրավ, դառավ գազան ու սովահար այդ գազանից մենք հալածված ինչպես մի հոտ՝ թողած տուն-տեղ, ունեցվածք ու գերեզմաններ, սոսկ հրաշքով փրկված ահեղ այդ գեհենից՝ գլխակորույս ու վշտաբեկ, ցրվեցինք մենք աշխարհով մեկ՝ հարահավերժ կորցնելով մեկս մեկին:

Իմ հուշերի մշուշներում ձյուն է մաղում նոճիների գբոսայգում… Փետրաթեթև, մեղմ ու նազուն ձյուն է մաղում մեր մազերին, մեր քունքերին, իմ գեղուհին հառնում է ինձ այդ հեռաբաղձ մշուշներից ՝ առաջվա պես լուսաժպիտ ու լուսագեղ: Նրա տեսքից հոգեզմայլ սիրտն իմ խայտում, խլրտում է, հոգիս ցնծում, թփրտում է, ու ես անկամ մրմնջում եմ արտասվալից. «Ցա՛վդ տանեմ, ցա՛վդ տանեմ, մի վհատվիր ու մի կորցրու հույսդ վերջին, ես կգտնե՛մ, քեզ կգտնե՛մ, միայն թե դու մի վհատվիր, ցա՛վդ տանեմ»…

ՎԱՂԸ ԱՐԴԵՆ ՈՒՇ ԿԼԻՆԻ

Մի մոլորվիր քո սիրուհու անցյալի մեջ և մի խանդիր: Աստված նրան՝ կրքահարու՛յց հուր աչքերով ու հրաներկ բո՛րբ շուրթերով, ըստեղծել է զուտ բերկրանքի, սիրո համար:

Կյանքը կարճ է, կարճ մի ճամփա, ճամփան՝ անդուլ հոգս ու մորմոք, դու ուղևոր՝ այդ կարճ ճամփին: Ողջը դա է, կուզես խնդա, կուզես՝ լացիր, անօգուտ է և ընդունա՛յն, ախ, ամեն ինչ, ճամփաղ անցիր, ի զորու չես դու փոխելու որևէ բան. ունայնություն ունայնունությանց, ունայնություն ունայնունությանց:

Մի մոլորվիր քո սիրուհու անցյալի մեջ, մի որոնիր այնտեղ ոչինչ ու մի խանդիր: Սիրիր նրան ու վայելիր սերը նրա, սիրիր նրան՝ ինչպիսին կա: Ինչ կա այսօր, վաղն այլևս չի լինելու, ինչ եղել է՝ ա՛նց է կացել, ինչ որ պիտի հետո լինի՝ պարուրված է անհայտությամբ. ապրիր այսօր, վաղը արդեն ուշ կըլինի:

ՄԵՆՔ ԳԱԼԻՍ ԵՆՔ…

Հազարան հավքի թևերին, թե լաջվարդ հեքիաթից դյութական՝ մենք գալիս ենք այս աշխարհ, ինչպես հավքը եթերում՝ անրջանքով, խայտանքով, երջանկությամբ ապրելու:

Երջանկությունն այդ, սակայն, ինչպես կապույտ հորիզոն՝ ինչքան որ մենք մոտենում, հեռանում է մեզանից, ու չենք հասնում մենք նրան, ախ, չենք հասնում մենք նրան… Ու հաշտվում ենք բախտի հետ, քանզի ուզենք թե չուզենք, ինչ գրված է ի վերուստ՝ ի սկզբանե մեզ համար, հաստատ այն էլ լինելու:

Հազարան հավքի թևերին, թե լաջվարդ հեքիաթից դյութական՝ գալիս ենք մենք լույս աշխարհ, գընում դեպի վերջալույս՝ ճանապարհին կորցնելով ընկերներին սրտակից, մոտիկներին՝ ըղձալի…

Չկա ոչինչ այս կյանքում, որը ավարտ չունենա. ժամանակի ընթացքում՝ անցնում, գնում, մոռացվում է ամեն բան՝ սեր ու խնդում, գեղեցկություն, գանձ ու գահ, լոկ կորուստն է զավակի, որ այրում է մեր հոգին ու չի անցնում մինչև մահ:

ՄԻ ՕՐՎԱ ԿՅԱՆՔ

Կա թիթեռի մի տեսակ, որ մի օր է ապրում սոսկ… Ոսկեթևիկ մի թիթեռ ծնվեց լույսը նոր բացված՝ զվարճանքով ողջ օրը ծաղկանց վրա ճախրելու, արևի ջինջ շողերում իր խատուտիկ թևերով ջրերի վրա թևելու, խնդությամբ ու բերկրանքով իր կարճ կյանքը ապրելու…

Մթար օր էր օրը այդ, արև չկար, մեգ ու մշուշ՝ խինդ չկար, չկար հավքի երգն անուշ, որ թիթեռը կախարդվեր, լույս չէր կաթում ծառերից, համրացել էր գետակն էլ, ծաղկի ղողանջ էլ չկար, անվերջ անձրև էր տեղում… Այդպես անցավ օրն ամբողջ՝ մինչև եղավ մայրամուտ, արևն անցավ սարերից, մութը ծանր, սևասև, իր մեջ առավ սար ու ձոր:

Անցավ օրը թիթեռի… նա վշտակիր, առհավետ ծալեց թևերն իր ոսկյա ու այդպես էլ չտեսավ ոսկեթևիկ թիթեռն այդ ու չիմացավ նա, ավա՛ղ, որ լինում են լուսաջինջ, պայծառալույս տաք օրեր՝ լեցուն զվարթ կանչերով…

…Մի՞թե դու չես կամ թե ես՝ չարաբախտ ու սգահար ոսկեթևիկ թիթեռն այդ…

ԵՎ Ո՞Ւ Ր ԷՐ ԱՍՏՎԱԾ

…Եվ ո՞ւր է Աստված: Տիեզերական հավիտենության իր գահին բազմած՝ այդ բարձունքներից չի իջնում նա ցած՝ ունկն դնելու ողբ ու կականը իր իսկ արարած երկրրի վրա:

Ո՞ւր էր նա, ո՞ւր էր, երբ հավատացյալ ողջ մի ժողովուրդ՝ թե մանուկ, թե ծեր, հլու-հնազանդ իր Արարիչին՝ Դեր Զորի պապակ անապատներում ոչնչացվում էր անգութ աշխարհի կույր աչքի առաջ՝ Աստծուն ի տես:

Եվ էլ ի՜նչ Աստված, եթե չի իջնում ամպերից այսդին ու չի բռնում նա արյունոտ ձեռքը տմարդ վայրենու ու չի անիծում չար գործը նրա, որ նզովվյալ լինի հարատև ու փորի վերայ գնա նա մենակ ու հող ուտի միայն կյանքի մնացյալ բոլոր օրերին:

Իր տունն ու տեղը թողած թուրքերին, հարյուր տարուց իվեր՝ Ադանա քաղաքից մինչև Սումգայիթ ու մինչև Բաքու, քայլում է մարդը՝ լքյալ, վշտաբեկ. Աստված տեսնում ու ոչինչ չի անում, իսկ նա տեղ չունի՝ ոչ թե ապրելու, անգամ թաղվելու:

ԱՆՑ ԵՆ ԿԵՆՈՒՄ ՕՐԵՐԸ ՄԵՐ…

Աշնանային թափուր հանդեր, դալուկ արև, թեթև քամուց մունջ օրօրվող դեղձան ծառեր, անձրևներից գունաթափված թախծող դեզեր՝ մենության մեջ…

Ցած են իջնում տերևները աշնանային՝ շիկակարմիր, իրիկնային արևի պաղ շողերի մեջ վերջին անգամ հուրհրատում, շողշողում ու գալարվում են հազարերանգ ու փայլկտուն, իջնում տամուկ սառը հողին:

Այդպես հանդարդ, աներևույթ, դանդաղորեն ու հեզասահ անց են կենում օրերը մեր՝ հրակարմիր ու վարդագույն… Շուտով կգա ձմեռը ցուրտ, ձյուն կտեղա փաթիլ-փաթիլ ու լայնըշի և կծածկի սար ու ձորեր, արտ ու արոտ, ու ձյան տակ լուռ կկորչի արահետն այն՝ ինձ մոտ բերող, ու դու չես գա, դու էլ չես գա…

Հետո նորեն կգա գարուն, կգա ամառ ու նոր աշուն. ո՜վ կհիշի տերևներն այն՝ այն, որ կային, այն, որ մեռան անցած աշնան…

ԱՄԵՆ ԻՆՉ ԿԱՆՑՆԻ

Ժամանակն անցնում է վարար գետի պես ու չի կանգնում բնավ…

Կարողացիր բերկրել երջանիկ թարթերով այս անցած օրվա՝ որպես արաչական գեղահրաշ ընծա, և քնելը նախքան՝ հիշիր վայրկյանն այն, երբ տեսար նրան՝ կրակ աչքերով, շուրթերով՝ բուրյան, ու դյութեց նա քեզ՝ անսպասելիորեն ու միանանգամից, հոգիդ լցնելով ծաղկած գարունքով:

Պահպանիր նրան աչքի լույսի պես, որ կյանքդ անցնի ցնծուն բերկրանքով, քանզի ողջ կյանքում հոգու տենչը քո՝ նա էր շարունակ, ու դու վերջապես գտել ես նրան: Իմացիր նաև՝ փոխադարձ սիրուց ոչինչ չկա վեհ. այն կորցնելուց հետո իզուր է թվում ապրելն այլևս: Սիրիր լոկ նրան, որի հետ լռելը՝ քան զրուցելը մեկ ուրիշի հետ, հաճելի է քեզ: Նվերն ուրիշի՝ մի ամբողջ աշխարհ թեկուզ նա տա քեզ՝ պետք չէ քեզ բնավ. քեզ նրա դյութիչ ժպիտն է պետք լոկ, և ուրիշ ոչինչ:

Ու չասես երբեք, թե առանց նրան ապրել չես կարող: Ապրել կարող ես, պարզապես աշխարհը կփոխվի աչքիդ, կխամրեն բոլոր գույները մեկեն, շնչելը կըլինի ծանր ու դժվար:

Այդպես է հարկավ. ժամանակն անցնում է վարար գետի պես ու հարափոփոխ այս մեծ աշխարհում քո ժամանակն էլ կգա ու կանցնի: Ամեն ինչ կանցնի՝ վառ հուշից բացի, որ անց է կացել երկնքից ընկնող աստղերի ներքո, ու չի կրկնվի, էլ չի կրկնվի… Ու գիտցիր մի բան, որ կյանքը նման է վառ արեգակի՝ երբ ջահել ենք դեռ: Արևի նման բոցավառվելով սիրո կրակից, հայացքով ետև՝ գնում ենք դեպի մեր լեռան հետև՝ ուրիշ մի կյանքով նորից ապրելու…

ԻՄ ՍԻՐՏԸ ՀԵՌՈՒ ԼԵՌՆԵՐՈՒՄ Է ՄԻՇՏ

Հեռվից նայողը ինձ չի հասկանա, իմ սիրտը հեռու լեռներում է միշտ… Ողջ գիշեր աչքին քուն չեկած մարդը լոկ կհասկանա, թե ինչքան երկար է տևում գիշերը, և թե արևն ինչպես է դանդաղ գնում մարելու՝ լույսն իր բաշխելով, վարդը թառամում՝ բուրմունքն իր տալով, խունկը այրվում է՝ շուրջը սփռելով հոտն իր բուրավետ… Այդպես է անշուշտ. վատը չտեսածը՝ լավը չի հասկանա: Ինչպես որ կուշտը՝ սովից մեռնողին:

Իլյա Սելվինսկին, տես, ինչ է ասում՝ եթե որևէ տեղ մի մարդ է մեռնում, ինձ թվում է, թե ես եմ մեղավոր… Ժամանակները փոխվել են հիմա՝ մարդասպան – քննիչ միասին նստած՝ հանցանք են հյուսում ընդդեմ սպանվածի: Քո անբիծ լինելը դեռ ոչինչ չարժե՝ նայած նենգ լեզուն ինչ կտարածի քո անվան շուրջը. ձյունն էլ է ճերմակ, բայց աղտոտվում է կեղտոտ ոտքերից:

Օրերը մթնում ու անց են կենում… Երջանկությունը հորիզոն է մի՝ ինչքան մոտենաս՝ հեռանում է այն: Բախտդ թե սև է՝ շատ մի կնկճվիր, վստահիր հույսին, այդ սևից հետո ճերմակը կգա, ո՞վ է տեսել, որ ձմեռը տևի ամբողջ մի տարի: Անցողական է ամեն բան կյանքում, դա նույնպես կանցնի, ամեն ինչ կանցնի. հույսդ մի կորցրու հանդեպ լավ օրվան: Դարձիր արմատներիդ՝ որտեղից գալիս և ուր ես գնում, բարություն արա ու գցիր գետը, կտեսնես՝ մի օր առջևդ կգա:

Հեռվից նայողը ինձ չի հասկանա, իմ սիրտը հեռու լեռներում է միշտ, այնտեղ է հոգիս, ու ես կարոտից գիշեր ու ցերեկ այրվում եմ անծուխ…

ԿԱԼԵՐՈՒՄ

Կարմրատ կաքավների լույս կախկղան կոհակվում է օրվա շոգի ու տապի մեջ, արտույտները մոտ արտերում արտորում են թախծագորով, խոտը կոխած հին կալերում շնկշնկում է հովը մեղմիվ՝ ինձ բերելով ձայներն անդարձ մեր մայրերի, որ էլ չկան, անց են կացել այս աշխարհից անվերադարձ…

Կռիվ մեկնած ամուսին ու որդիներին փոխարինած՝ վշտից տմույն, անլուսաշող կյանքը նրանց հանդ էր, արտեր ու մանգաղ, մաճ ու գութան, մղեղ ու կալ, հույսն էր պահում լոկ նրանց, թե բոլորը հետ կգան… Ավա՜ղ չեկան, էլ չեկան, շա՜տ-շատերը ետ չեկան, ով էլ եկավ՝ կաղ ու կրոնատ, խաթարվա՜ծ:

Խոնարհվենք, եկ, մենք լռին ի հիշատակ սրբասուրբ մեր մայրերի ինքնուրաց, որ վաղուց է ինչ չկան, լույս են դառել ու չկան: Ու խոնարհվենք նաև լուռ նրանց առջև վերբստին, ովքեր ահեղ այն կռվից հաղթանակած տուն եկան, բայց ապրեցին կյանքն իրենց՝ դժվար կյանքով պարտվածի…

Մշտահոլով այս կյանքում մենք վերջինն ենք, որ տեսանք դեմքը նրանց լուսաշինջ, մենք էլ կանցնենք աշխարհից՝ ո՜վ կրհիշի էլ նրանց…

Կաքավների կախկղան՝ կալից անդին հանդերում, տրտում երգը արտույտի՝ ոսկեորած արտերում, սիրտն իմ լցրին անձկությամբ՝ մեր հին լքված կալերում:

Ա՜Խ, ԵՍ Ի՞ՆՉ ԱՆԵՄ…

Զույգ որդիներն իմ թևերն էին իմ, հատված թևերով, ա՜խ, ես ի՞նչ անեմ: Ու՞մ բացեմ սիրտս, որ ինձ հասկանա:

Անընդգրկելի, ծանր է ցավս, առավել ծանր, որ այս լույս օրն ու ալվան աշխարհը նրանց համար չէ, որ ես այլևս չեմ տեսնի նրանց, չեմ լսի ձայնը նրանց հոգեթով, խոսքն ու ծիծաղը անուշաբարո էլ չի հնչելու մեր ականջներում:

Ու՞մ պատմեմ ցավս՝ ծովի պես խորը, ո՞վ կհասկանա, որ ներսում այրվում, խորովվում եմ լուռ և ամեն անգամ, որդիներին իմ մտաբերելիս, մեռնում – հառնում եմ՝ պատկերը նրանց իմ աչքի առջև, սուրբ անունները՝ շուրթերիս վրա:

Մեծ տառապանքը տանում են լռին, ու ես ինքնակամ ժպտում եմ մարկանց, քանզի ուրիշը ժպիտն է տեսնում, քո հոգու ցավը ոչ ոք չի տեսնում:

Ես ու՞մ, ու՞մ պատմեմ ցավը իմ անանց, մարդ արարածը ինձ չի հասկանա… Գնամ հայրենի հանդերին պատմեմ իմ տվայտանքը, հովից օրորվող խոտ ու ծաղկունքին, մենավոր կանգնած ծառերին տրտում, անտառի խորքում զմրուխտ մամուռով պատած քարերին, երգող հավքերին, ձորում կարկաչող ջրերին պատմեմ ու նրանց հետ լամ ցավն իմ մորմոքուն:

ՀՈԳՆԵԼ ԵՄ ԱՐԴԵՆ

Ես այս աշխարհից հոգնել եմ արդեն:

Էլ չեմ դիմանում կեղծիքին, ստին, շողոմքոր մարդկանց
շողոմ խոսքերին, հանկարծ փող տեսած՝ հոգով աղքատի զազիր պահվածքին, փող ունեցողի քամահրանքին, չունեցողների խղճալից տեսքին էլ չեմ դիմանում:

Սիրտս տարագիր էլ չի դիմանում դրացու դավին, նախանձ ու դժխեմ բարքերին նրանց ու լեզուներին՝ նենգարկու, քսու, ես չեմ դիմանում:

Հոգիս կեղեքող մորմոքուն ցավին էլ չեմ դիմանում, զի անկարող եմ գեղեցկատեսիլ իմ որդիներին տեսնել վերստին, անհուն կարոտից փշրված սրտով իմ գիրկը առնել… ախ, որովհետև այլևս չըկան:

Ոչ ոք չի հիշում՝ ով չկա արդեն, ոչ ոք չի հիշի, երբ չենք լինի էլ: Ապրողն ապրում է, մեռնողը՝ մեռնում, մեռնելը հեշտ է, ապրելն է դժվար, քանզի ապրել կա՝ մեռելուց վատ է:

Դժվար է ապրել այնպիսի մի տեղ, ուր որ Կայենը և օրենսդիր է, և վայրագ դահիճ, դատավոր նաև, և որ նրանցն է արքայությունը երկրի վրա ու բիլ երկնքում:

Ես այս անիրավ աշխարհից, իրավ, հոգնել եմ արդեն:
Երանի նրանց, որ չեն ծնվել դեռ…

ԿՅԱՆՔԸ ԵՐԿԱՐ Է ԹՎՈՒՄ

Կյանքը երկար է թվում, քան թե որ կա իրապես:

Կարճատև է այն, ավաղ, փութկոտ անցնում է օրը, օրը դառնում է տարի, փոփոխվում է ամեն ինչ՝ ինչ որ թանկ էր մեզ համար ոչ հեռավոր անցյալում, դառնում է սին ու չնչին… Եվ վաղանցիկ այդ կյանքում՝ վատ օրերը անհատնում, լավ օրերը՝ աննշմար, ու անցնում է կյանքը մեր՝ մեր իղձերին խոտորնակ, մեկն ապրում է հրճվալից, աջ ու ահյակ կտտելով, մյուսը՝ բախտին հնազանդ, աղի արցունք կուլ տալով:

Արդարություն անձկացի ողջ իմ կյանքում՝ ապարդյուն, որտեղ բարին՝ չարն այնտեղ, ու հաղթողը նա է միշտ: Հազար ափսոս արդարին՝ այս անարդար աշխարհում: Աստված վատին ստեղծեց՝ լավերի տեղն իմանանք, ոչ արդար գործ, ոչ էլ խոսք, մի սպասիր դու տմարդից, մարդու լեղին, իմացիր, չի հասնիև ոչ մի թույն: Մահն է արդարը միակ՝ ոչ հարուստ է ճանաչում, ոչ զազրելի պաշտոնյա, ոչ էլ անգետ ու գիտուն. անխտրական տանում է հեռու անհայտ մի աշխարհ:

Կյանքը սիրուն խաբկանք է, գալիք օրվան հույս չկա՝ թոչունն մրջյուն է ուտում, վաղը մրջյունը՝ թոչուն:

Կյանքը երկար է թվում, սակայն կարճ է հիրավի, դանդաղասահ ցատկ է մի՝ ծնված օրից մինչև մահ…

ՍԱՆԴՈՒՂՔՆ Ի ՎԵՐ…

Փոփոխական այս աշխարհում անցավոր է ամեն բան. սանդուղքն ի վեր, սանդուղքն ի վար՝ անց է կենում կյանքը մեր: Երեկ՝ հարուստ, հարգ ու պատիվ՝ խնկարկում էր ազգուտակ, այսօր՝ աղքատ, ուղեկիցդ՝ մտքերըդ են տվայտալի, իսկ ընկերդ՝ անհուսալի հույսը վաղվա փուչ օրվան:

Հրապուրված սին ու շողոմ, սուտ խոսքերով, տունս արած քարվանսարա, ոտի կոխան ամենքի՝ չհասկացա մի անողորմ ու ցավագին իրողություն. մարդիկ, եղու՛կ, հիշում են քեզ, երբ որ իրենց պետք ես միայն:

Այդպես էլ կար, Տերը վկա, այդպես էլ կար՝ դժվար օրիս մեկը չկար:

Ինչ կորցրել՝ չեմ որոնում, միևնույն է, էլ չեմ գտնի: Կյանք ասածը դա է, որ կա՝ մեկը ողբում կորուստը իր, մյուսն՝ հրճվում իր գտածով:

Անցածն անցավ, անդարձ անցավ, ինչ որ պիտի վաղը լինի՝ թող որ լինի, ո՞վ կասի, թե վաղվա օրն ինչ կլինի, ունեցածով մխիթարվենք ու չընկճվենք որպես մի զոհ. չունևորի մորմոքումով՝ ունևորը հրճվում է զոհ:

Օրը մթնում, անց է կենում, մութ գիշերվան՝ վաղվա լույսն է հաջորդելու, բախտդ թե սև՝ մի վիատվիր, սևից հետո ճերմակ կգա: Ամենացուրտ ձմռանն անգամ գարնան օրն է դիմավորում, ո՞վ է տեսել, որ ձմեռը հարատևի…

Փոփոխական այս աշխարհում անցավոր է ամեն բան. սանդուղքն ի վեր, սանդուղքն ի վար՝ անց է կենում կյանքը մեր…

ՈՒՇ Է…

Հուշե՛ր, հուշե՛ր, գիշեր ու շեր, շենշող հուշե՛ր, հին հուշերի մշուշներում նվաղ հնչյուն՝ ու՛շ է, ու՛շ է…

Կարծես երկար կյանք էր տրված՝ վայելելու իմ դիցանույշ գեղեցկուհու սերը վսեմ՝ բայց կյանքն ասես մի ակնթարթ՝ թռավ-անցավ, չհասկացա՝ ինչպե՞ս եկավ, ինչպե՞ս անցավ…

Հուշե՛ր, հուշե՛ր, ու հուշերի մշուշներում լուսաշղարշ մի լույս պատկեր կանչում է ինձ սև աչքերի մեղմ դյութանքով, որպեսզի ես նորից հառնեմ մոռացումից, զգվեմ նրան ինքնամոռաց, բույրը առնեմ ես կաթնահունց պարանոցի, հրափափուկ շուրթիկների համը զգամ ու վերստին տաք շշունջը լսեմ նրա՝ հավերժական սիրո մասին…

Հուշե՛ր, հուշե՛ր, գիշեր ու տիվ հուշեր անթիվ, անծայր հուշեր, նվաղուն ձայն երկնի ծերից՝ արդեն ու՛շ է, ու՛շ է…

ԿՌՈՒՆԿՆԵՐ

Կռունկներ իմ, կռունկնե՛ր, անկյունաշար չվերթով ու՞ր եք այդպես թևածում անծայրածիր երկնքով…

Կուռլու-կուռլու… թախծագորով կանչերով գնում եք տաք երկրներ: Ես էլ հավք եմ թևահատ՝ ետ մնացած երամից, ինձ էլ տարեք, ախ, ձեզ հետ, չմնամ այս ցրտերում:

Սիրտս երկիրն է ուզում մեր, ուր մեղմ հով կա շնկշնկան, կակաչազարդ հանդ ու սար, ջինջ գետակներ քչքչան, անտառները թավախիտ իրենց բույրն են ամբրոսում, լորն է կանչում քաղցրալուր դեղնագունած արտերում…

Կուռլու-կուռլու, կռունկներ, սիրուն հավքեր երկնային, իմ տարաբախտ սիրտն առած՝ հեռանում է ձայնը ձեր, իմ կարոտը գեթ տարեք, թե որ ձեր չուն մեղմ տաղով՝ Ղարաբաղով անց կենա…

ՆՋՈՎՔ

Աստված ստեղծեց երկինք ու երկիր, անծայրածիր էր երկիրն, ամայի, և սև խավարն էր պատած ամենուր, և Աստծու ոգին լուռ թափառում էր ջրերի վրա:

Եվ Աստված ասաց՝ թող որ լույս լինի, և լույսը եղավ, և նա գտավ, որ լույսը բարի է ու տարանջատեց լույսը խավարից, լույսը ցերեկն էր, խավարը՝ գիշեր: Եղավ երեկո, եղավ առավոտ, օրն էր առաջին:

Աստված ջրերը հավաքեց մի տեղ ու ծով կոչեց այն, ցամաքը՝ երկիր, հետո նա ծառ ու ծաղկունք արարեց, արև ու լուսին, հորդուն անձրևներ, գետեր վարարուն, հավքեր բազմաբյուր՝ մեղրածոր երգով, ձուկ ու կենդանի արարեց հետո, որ չէին եղել, աշխարհը համակ լցվեց հմայքով, խոտի շրշյունով, աղբյուրների մեղմ, քնքուշ կարկաչով, և այդ ամենը հաճո էր ունկին ու աչքին Տիրոջ, նա ասաց՝ լավ է:

Եվ Աստված հետո, վեցերորդ օրը, մի բուռ հող առավ, արարեց մարդուն այդ մի բուռ հողից ու կնոջը նրա՝ իր իսկ ամուսնու սեփական կողից:

Եվ հետո, հետո… տեսավ տիրադավ բնույթը մարդու՝ ընչաքաղց անդուլ, գծուծ ու դաժան, նենգ ու դրուժան, ագահությունը տեսավ նա նրա, որ հագուրդ չունի, և նրա նախանձն ու տարփանքը զազիր, շուրջը պղծելու, իր մերձավորին կառափնատելու բնազդը ատեց ու շատ ափսոսաց, որ ստեղծեց մարդուն երկրի վրա ու հավիտյանս նզովեց նրան…

Ո՞Վ ԿՄՏԱԾԵՐ…

Ո՞վ կմտածեր, որ կգա մի օր՝անկամորդ, շվայտ վերնախավերի անողոք կամոք կյանքը մեզ համար շուռ կգա հանկարծ, ու մենք կհայտնվենք կյանքի հատակին:

Որ կգա մի օր՝ երեկվա թերուս գողն ու խաբեբան կդառնան հարգի, ամենուր նրանց ծունր կդնեն, լրբերը՝ սրբեր, կդառնան մի օր, իսկ ազնիվ մարդը կարժեքազրկվեր… Ով, տեր իմ Աստված, որտեղի՞ց եկել, այս ու՞ր ենք հասել. գողը փողկապով պատգամավոր է, նա և օրենսդիր, և դատավոր է. փողը իրենցը, երկիրն իրենցը, կամքը իրենցը, կուզեն կայպանեն, կուզեն կըսպանեն…

Ու՞մ մտքով կանցներ, որ մարդը այսպես կարժեքազրկվեր, որ նա ամեն ինչ թողած թուրքերին, իր մարող հույսը՝ անտես Աստծուն, փախստականի անդուր պիտակով մունջ կդեգերի քաղաքից-քաղաք՝ հլու-հնազանդ օրավուր աճող արհավիրքներին:

Ո՞վ կմտածեր, որ սև աչքերով իմ նուրբ գեղուհուն բախտը կնետի մի ուրիշ երկիր, ու ես այլևս չեմ տեսնի նրան: Որ ես ամեն օր կհիշեմ նրան ու կերազեմ, նա այցի կգա ինձ երազներում՝ առաջվա նման գեղեցկատեսիլ ու միշտ ցանկալի՝ առաջվա նման, հետո կարթնանամ, հոգին իմ կայրվի կարոտից նրա:

Ո՞վ կհավատար, որ կգա մի օր, ու ես՝ հուսաբեկ, անպաշտպան, անտուն, ինչպես չոր տերև՝ քամու բերանին, տեղ չեմ ունենա այս մեծ աշխարհում: Ու տաժանելի մտքերից խոցված, կարող եմ ընկնել տամուկ փողոցում և մարդկանց հոսքից մեկը չի լինի՝ թեքվի ինձ վրա, որ գոնե նրան, հանգչող շշունջով մրմնջամ նրան, որ խռով եմ ես այս դժխեմ կյանքից. ողջ աշխարհն իմ մեջ ես տեղավորում ՝ ես այս աշխարհում չեմ տեղավորվում:

Ո՞վ կմտածեր, որ կգա մի օր՝ կյանքը մեզ համար շուռ կգա հանկարծ… Ու՞մ մտքով կանցներ… Ո՞վ կհավատար…

ԵՐԱՆԻ ԹԵ

Ղարաբաղն իմ սիրտն է հեռավոր, եզերքն իմ՝ այլևս անհաս, և հոգին իմ՝ վհատ ու նկուն, երբ իջնում է գիշերը լուսնկա, թափառում է քնած հանդերում ու մանկութ կածաններով նրա:

Դեղձան արտերն այնտեղ ծփուն օրորվում, ալիքվում են քամուց, շրջան կազմած՝ ծտերի երամն է անցնում հին կալերի վրայով, ծիրանագույն արևի մեջ տատրակն օդում կախվում, քարանում է անշարժ, լորի գեղգեղանքն է ծորում ծաղկանախշ դաշտերում:

Երկինքն՝ աստղազարդ, մուգ կապույտ է այնտեղ, սարերը վսեմ՝ աստղերը շաղ եկած սարերի վրա, ջրերը կարկաչում են երգեցիկ, անտառները խշշում օրնիբուն, և դյութիչ բույրերից տամուկ սիրտն իմ ճաքում է ըղձանքից:

Ախ, հայրենիք իմ հեռու, մայրական գերեզման անտեր, երանի ես էլ հանգեի այնտեղ և ավերված երազներից իմ սին՝ ծաղկեին հրագույն կակաչներ ՝սրտները, ավաղ, սևասև:

Ղարաբաղն իմ հոգին է հեռավոր՝ ինձ համար անհաս այլևս…

Ի Ր Ի Կ Ն Ա Յ Ի Ն Ն Վ Ա Գ

Երկինք լուսաշինջ, ծովը կապուտակ՝ տաք արևի տակ, ու սերը մեր ջինջ… Ախ, ինչ բարեբախտ, երջանիկ էինք այն երանելի հեռու եղեմում: Չարի կամոք էր, սև դևի կամոք ՝ թողած տուն ու տեղ, լքյալ, վշտաբեկ, ինչպես սովահար վայրի գազանից հալածված մի հոտ՝

բախտը մեզ աշնան տերևի նման նետեց այլ ափեր, ու մենք մնացինք իրարից հեռու ու իրար համար լուռ տվայտելիս:

Մենք բաժանվելիս՝ սիրտն իմ ասում էր, որ կհանդիպենք: Մենք կհանդիպենք՝ ասացի նրան, ինքս իմ խոսքին չհավատալով: Նա հոգնած ժպտաց: Սևշող աչքերում շողը արցունքի՝ նայեց վշտալից ու մտամոլոր: Սա չի կրկնվի՝ ասաց հուսաբեկ, ես զգում եմ դա՝ մենք չենք հանդիպի, էլ չենք հանդիպի մենք ոչ մի անգամ…

Իմ Կիթերուհի, գեղաչյա չքնաղ դու իմ Սուլամիթ, քեզանով լցված,
խաչված քեզանով, այսքան տարիներ չտեսած անգամ՝ ինչու՞ եմ դեռ քեզ տենչում կաթոգին, աչքերիդ հուրը ինչու՞ է այսպես այրում իմ հոգին:

Իմ հուշերի մեջ, առաջվա նման, դու միշտ ցանկալի ու հուզագրգիռ,
շուրթերով բոսոր ու հուզաթրթիռ, անվերջ սրտիս մեջ, անդուլ ինձ հետ ես,
գիշեր ու ցերեկ քեզ եմ երազում՝ լինի արթմնի կամ թե երազում:
Ախ, իմ պաշտելի, դու ինձնից հեռու, հեռու-հեռավոր, ես՝ կարոտ հոգով
ու մշտամոլոր, սիրտն իմ նվաղուն անունդ է տալիս, կարոտած հոգիս՝ տխրալիր լալիս: Դու գեղահրաշ, դու իմ աննման, քեզնով ի վերուստ խաչված ինքնակամ, ապրում եմ տրտում այս հեռու ցրտում, ու, եթե բան է, Աստված չարասցե, մենք չհանդիպենք և ոչ մի անգամ, իմացած եղիր, ողջ կյանքում քեզ եմ սիրել ես միայն՝ հնազանդ, անկամ, ու քո անունն է լինելու շուրթիս իմ վերջին շնչում, քանզի քեզանով, լոկ քեզանով եմ ապրում ու շնչում այս անագորույն դժնի աշխարհում…

ԻՆՉ ԿԼԻՆԵՐ…

Հեռո՛ւ, հեռու, իմ հեռավոր հայրենի տուն, ինչո՞ւ այսպես ես անընդհատ հիշում եմ քեզ, և իմ հոգին կսկծագին, երբ իջնում է գիշերը խոր՝ լիալուսնի լույսով զօծված, դեգերում է եղեմական մեր սարերում, ձորերում մեր խորնդասույզ ու ցիրուցան մեր հանդերում ծաղկածփուն:

Ինչո՞ւ այսպես ես վերստին հիշում եմ քեզ, իմ դեմ՝ կապույտ երկինքը մեր, գետը՝ խելառ, որ խայտալով գլորվում է քարերն ի վար, անտառները ամպածրար՝ խնկարկում են բուրմունքները իրենց տամուկ, մեղմիվ հովը օրորում է խոտ ու ծաղիկ, զմրուխտ արտից լորն է կանչում տրտմալիր, ու կարոտից, ա՜խ, կարոտից սիրտն իմ ներսում ճաք է տալիս:

Հեռո՛ւ, հեռու, իմ հեռավոր հայրենի տուն, մայրական սուրբ շիրիմ անտեր, ի՜նչ կլիներ, որդեկորույս ու հուսաբեկ՝ կռունկների երամի հետ դառնայի ետ, մորս կողքին մարեի մունջ և իմ ավեր երազներից ալ կակաչներ հառնեին վեր, հուրհրային՝ սրտները սև իմ սրտի պես…

ՔԱՆԻ ՈՒԾ ՉԷ ԴԵՌ

Պաշտիր դու մորդ, քանի նա դեռ կա, քանի ուշ չէ դեռ…
Սիրիր դու նրան, քանզի ոչ մի տեղ արար աշխարհում մորդ նմանը դու չես գտնելու: Դու չես գտնելու որևէ մեկին, որ կարոտ սիրտը քո ճանապարհին՝ քեզ անմնացորդ նվիրված լինի, լոկ քեզնով շնչի, լոկ ապրի քեզնով:
Սիրիր դու մորդ, սիրիր անդուլ դու ու մի թերացիր սրտիդ ջերմ խոսքը ասելու նրան:
Կգա ժամանակ՝ անողորմ ու ժանտ, ու դու կափսոսաս, ա՛խ, շատ կափսոսաս, որ չես հասկացել յուր ժամանակին ասելու նրան, թե նա ինչքան թա՛նկ, հարազատ էր քեզ ու երբ նա

չկա՝ որբ ես դու արդեն: Դու կհասկանաս, ամեն ինչ հետո դու կհասկանաս, բայց ուշ կլինի, շատ ուշ կլինի:

…Օրերից մի օր տուն կվերադարնաս անայգ ու անմիտ քո հեռուներից և խոտակալած հին բակում կանգնած՝ անկար ու տրտում, կկանչես նրան՝ քար լռությունը կարձագանքի քեզ…

ԻՆՔ ՆԱՆԿԱՐ

Միեր Մկրտչյանին

Մարդը հոգնած էր, թշվառ ու տրտում, բայց, երևում էր, հույս կար դեռ սրտում:

Նա հավատում էր, որ ծեր բժիշկը կձերբազատի տանջող մտքերից:

– Կյանքում լինում են այնպիսի պահեր, – ասաց այցելուն, – երբ աչքերիդ մեջ արցունքներ չկան, այնինչ սիրտդ մի ծով է արցունքի… Ցավը կեղեքում, խեղում է հոգիդ, – շարունակեց նա:– Երբեմն կարծես ժպտալ չես կարող կամ թե ծիծաղել, բայց դե ժպտում ես, նույնիսկ ծիծաղում, ծիծաղը պետք է, քանզի ծիծաղով թվում է հեշտ է տանել խոր ցավը… Ցավը քարին են տվել, որ տանի, քարը չի տարել՝ մարդը տանում է: Անողոք ցավը, որ գիշեր ու զօր հանգիստ չի տալիս:

Նա դադար տվեց մի կիսավայրկյան:

– Տասը տարի է՝ կինս ընկել է հոգեբուժարան, -հոգնատանջ ձայնով վերստին խոսեց:– Իմ որդին ևս, տանը պարփակված, հոգեկան ծանր խախտումներ ունի… Նախանցյալ տարի Արգենտինայում դուստր կորցրի ավտովթարից…

Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, купив полную легальную версию на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.